Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի
2021 թվականի հրամանով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բովանդակություն

Ներածություն 3

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ..... 4

2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 8

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 30

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 40

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 50

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 44

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..55

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ..... **Error! Bookmark not defined.**

8.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ..... **Error! Bookmark not defined.**

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 60

10. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՋՄՎԱԾ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... **Error! Bookmark not defined.**

Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2020 թվականի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) սահմանված ժամկետներում կատարվել են հետևյալ միջոցառումները՝

- ✓ ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1106-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 30-ի թիվ 1226-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ քաղաքաշինական տեսակետից առավել ռիսկային օբյեկտներում ստուգումների իրականացում.
- ✓ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ շինարարական թույլտվությունների և շինարարությունը սկսելու վերաբերյալ տեղեկանքների էլեկտրոնային հենքերի ձևավորում.
- ✓ Տեսչական մարմնի ոլորտային փաստաթղթերի, ձևաթղթերի լրամշակում, հաստատում.
- ✓ «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ Տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ հարցազրույցների կազմակերպում և անցկացում.
- ✓ Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում.
- ✓ ըստ Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումների նպատակների, խնդիրների և արդյունքների վերաբերյալ հրապարակումների պատրաստում, հարցազրույցների կազմակերպում՝ տարբեր ձևաչափերով (տպագիր, ռադիո և հեռուստատեսային հարցազրույցներ).

- ✓ ԶԼՄ-ներում տեղ գտած վերահսկողության ոլորտին առնչվող և հանրային հետաքրքրություններ առաջացնող հրապարակումների մշտադիտարկում, հայտնաբերված հրապարակումների վերաբերյալ արագ արձագանքում(պատասխանատուների կողմից պատասխանի, հերքման և/կամ պարզաբանման ստացում և տարածում:

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետևանքով ստեղծված իրավիճակով պայմանավորված Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված մի շարք միջոցառումներ չեն կատարվել կամ կատարվել են ոչ ամբողջ ծավալով: Այն է,

- ✓ ստուգումների տարեկան ծրագրով տրանսպորտի անվտանգության բնագավառում նախատեսված 30 ստուգումներից ավարտվել է 16-ը.
- ✓ ստուգումների տարեկան ծրագրով էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում նախատեսված 277 օբյեկտների ստուգումներից ավարտվել է 102-ը.
- ✓ ստուգումների տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված 784 օբյեկտների ստուգումներից ավարտվել է 3 55-ը.
- ✓ ստուգումների տարեկան ծրագրով հողի օգտագործման և պահպանման բնագավառում նախատեսված 10 ստուգումներից ավարտվել են 2-ը.
- ✓ հուլիս-օգոստոս ամիսներին նախատեսված նախակրթական հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտություններ չեն իրականացվել.
- ✓ մայիս-հունիս ամիսներին նախատեսված մանկական ամառային ճամբարներում հրդեհատեխնիկական հետազոտությունները չեն իրականացվել.
- ✓ 2020թ. ընթացքում չեն իրականացվել իրազեկում-հանդիպումներ Երևանում և ՀՀ մարզերում տնտեսվարող սուբյեկտների հետ՝ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու և կանոնակարգելու նպատակով:

2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումները կատարվել են ուշացումով.

- ✓ նախատեսված 5 սոցիալական հոլովակներից պատրաստվել և տարածվել է 3-ը.
- ✓ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը

սահմանելու մասին» թիվ 624 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

- ✓ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ Գործավարության կարգի մշակում և հաստատում.
- ✓ Ստուգումների ուղեցույցի մշակում և ՏՄ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացում։

2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումների կատարումը հետաձգվել է.

- ✓ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի ««Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1933-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի ««Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2399-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն

որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

- ✓ ՀՀ կառավարության 2007 թվականի 12 ապրիլի «էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննության կարգը» հաստատելու մասին N 580-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված էր կատարել 30 ստուգում տրանսպորտի բնագավառում, սակայն պայմանավորված այն հանգամանքով, որ հայտարարված արտակարգ դրության հետևանքով կասեցվել էին միջպետական ուղևորափոխադրումները, այդ բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները ստուգման չեն ենթարկվել: Արդյունքում ավարտված է 16 ստուգում (որից 1-ը հրդեհային ոլորտի հետ համատեղ), ինչը կազմում է նախատեսված քանակի 53%-ը:

Ստուգումների ընթացքում բացահայտվել է 63 խախտում, որոնցից առավել կրկնվողներն են.

- *երթուղու չվացուցակով սահմանված մեկնման ժամերի պահպանման պահանջի խախտումներ – 8 տնտեսավարող սուբյեկտի մոտ,*
- *պարբերական և սեզոնային տեխնիկական սպասարկում իրականացնելու պահանջի խախտումներ – 4 տնտեսավարող սուբյեկտի մոտ,*
- *վթարի կամ անսարքության հետևանքով ավտոբուսի դռների խափանման դեպքում ուղեսրահի ապակիների ջարդելու մուրճերի բացակայություն - 6 տնտեսավարող սուբյեկտի մոտ:*



Ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրվել է 21 կարգադրագիր:

Ստուգված կազմակերպություններից մեկում խախտումներ չեն արձանագրվել: Թվով 4 կազմակերպություններում ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ տրված կարգադրագերի կատարման ընթացքի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ ընկերությունները վերացրել են բոլոր խախտումները: Թվով 10 կազմակերպություններում իրականացվել են վերստուգումներ:



Վերստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ստուգումների ընթացքում հայտնաբերված 63 խախտումներից կազմակերպությունների կողմից վերացվել են 54-ը (85.7%-ը)։



2020 թվականին Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 26 ստուգում, որից տարեկան ծրագրով՝ 16 ստուգում, ինչը կազմում է ստուգումների ընդհանուր քանակի 61.53%-ը, և 10 վերստուգում՝ 38.47%։ 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 5.4 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.9-ը։

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 2.1 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.3-ը։

Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները (100%) նախատեսված են եղել տարեկան ծրագրով:

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից տրանսպորտի բնագավառում ստուգումներ չեն իրականացվել:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված էր կատարել ստուգումներ էներգետիկայի և էներգասպառման բնագավառում տնտեսավարող սուբյեկտների 277 օբյեկտներում: Սակայն ՀՀ-ում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ ստուգումները Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարագրով կասեցվել են: Արդյունքում, 277 օբյեկտներում նախատեսված ստուգումներից ավարտվել են 102-ը (նախատեսված ընդհանուր քանակի 36.82%), իրականացվել է 5 վերստուգում:



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 974 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Վերստուգումների արդյունքում խախտումների քանակը նվազել է 2.9%-ով:

Ստուգումներն իրականացվել են հետևյալ ոլորտներում.



Տեխնիկական ստուգումների ընթացքում <u>տնտեսավարող սուբյեկտների</u> 95 օբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում) բացահայտվել է 434 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 44,5%-ը (ընդհանուր խախտումների քանակը 974 է)։

Հիմնական խախտումները վերաբերում են.

• *կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգման կազմակերպմանը – 43 դեպք,*

• *գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող աշխատակիցների, այդ թվում նաև եռակցողների, գիտելիքների ստուգման կազմակերպմանը – 41 դեպք,*

• *գազի տնտեսության շահագործման, սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգների առկայությանը - 30 դեպք,*

• *գազատար խողովակների համապատասխանությանը ազգային ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին– 25 դեպք:*

<u>Գազաբաշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման</u> 51 էներգատեղակայանքներում բացահայտվել է 435 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 44,7%-ը։

Հիմնական խախտումներն են.

• *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման անվտանգ մեթոդների հրահանգների բացակայությունը – 34 դեպք,*

• *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների արտադրական տեխնոլոգիական հրահանգների բացակայությունը – 32 դեպք,*

• *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հրդեհային անվտանգության հրահանգների բացակայությունը – 32 դեպք,*

• *գազատարի տեխնիկական շահագործման՝ շրջայցային կամ տեխնիկական սպասարկման չկատարելը - 32 դեպք,*

• *գազատարի տեխնիկական շահագործման՝ պրոֆիլակտիկ պլանային վերանորոգման չկատարելը - 32 դեպք։*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է գազի համակարգի՝ գազափոխադրման բարձր ճնշման 2 սուբյեկտ, բացահայտվել է 5 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,5%-ը։

110 կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներում՝ էլեկտրահաղորդման օդային գծերի 3 տեխնիկական ստուգմների ընթացքում բացահայտվել է 26 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2,7%-ը։

Ստուգվել են 8 110 կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներ՝ ենթակայաններ (ԵԿ) և բաշխիչ սարքվածքներ (ԲՍ)։ Ստուգումների ընթացքում բացահայտվել է 74 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 7,6%-ը։ Հիմնական խախտումներն են.

• *բաշխիչ սարքվածքի - տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալների բացակայությունը – 6 հատ,*

• *բաշխիչ սարքվածքի և ՅԼՍ-ի բոլոր մետաղական մասերի հակաքայքայիչ ծածկույթի բացակայությունը – 4 հատ,*

• *ԵԿ-ի հիմնական և օժանդակ սարքավորումների նորոգման հեռանկարային տարեկան և ամսական ժամանակացույցների բացակայությունը – 4 հատ։*

Խախտումների բացակայության վերաբերյալ տրվել է 11 տեղեկանք, որից 8-ը ստուգումների և 3-ը վերստուգումների արդյունքում (‹‹ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՅԱՆՑԵՐ›› ՓԲԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԱՍ, «ԱԹԵՆՔ» ՍՊԸ, «ԳՐԻՆ» ՍՊԸ, «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՄԴ, «ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ, «Ս.Ա.Մ. ՀՈԹԵԼ» ՓԲԸ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆ-5» ՀՄ, «ՇԱՐՈՒՐ» ԱԿ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՍ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ ԿՈՏԱՅՔԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՍ, «ԳԼԱՆԺ ԱԼԿՈ» ՍՊԸ), կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 96 կարգադրագիր։ Հարուցվել է 24 վարչական վարույթ, որից կարճվել 1-ը։

Լոռու մարզում գտնվող «Լիլիթ-95» ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ «Լիլիթ-95» ՍՊ ընկերության գազամատակարարումը դադարեցված է 2018 թվականի սեպտեմբեր ամսից, գազատարը խցափակված է, իսկ չափիչ հանգույցը և

անհատական ճնշման կարգավորը (ԱՃԿ) կոնսերվացված են և չեն շահագործվում: «Ծաղկասար» ԱԿ, «Հացատու», «Անարան», «Լուսինե-Ա», «Կոմանդոս Ա», «Կինոթատրոն Մոսկվա», «Ոսկե Բլուր», «Արտյոմ և Վահագն» ՍՊ ընկերությունները և «Հեսփերուս», «Ռոսնեֆտ-Արմենիա», «Սուպեր Գռուպ» ՓԲ ընկերությունները չեն ստուգվել, քանի որ չեն գործում:

2020 թվականին Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 107 ստուգում, որից տարեկան ծրագրով 102 ստուգում, ինչը կազմում է ստուգումների ընդհանուր քանակի 95.3%-ը, և 5 վերստուգում՝ 4.7%: 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3.7 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.01-ը: 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1.2 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.0-ը:

Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով:

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից էներգետիկայի և էներգասպառման բնագավառում ստուգումներ չեն իրականացվել:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

Հողօգտագործման բնագավառում Տարեկան ծրագրով նախատեսված էր 2020 թվականի ընթացքում իրականացնել 10 ստուգում, սակայն կատարվել են միայն երկուսը, ինչը կազմում է նախատեսվածի 20 տոկոսը:

2020թ. փետրվարի 12-ից 25-ը ներառյալ իրականացվել է տեսչական ստուգում ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության կողմից մարզի համայնքներում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ, որի ընթացքում ստուգվել են նաև մարզի վեց համայնքներ՝ Մյասնիկյան, Ոսկեհատ, Պտղունք, Մուսալեռ, Այգեկ և Գայ: Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 66 խախտում: Ըստ համայնքների խախտումներն ունեն հետևյալ բաշխվածությունը.



Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ նշված բոլոր համայնքներում հողերի ընթացիկ հաշվառման աշխատանքներն իրականացվում են թերություններով, մասնավորապես չի վարվում հերթապահ կադաստրային քարտեզ: Սխալ են կազմված համայնքների հողային հաշվեկշիռները, որոնք հետագայում դառնում են մարզի և այնուհետ հանրապետության հողային հաշվեկշռի մի մասը:

2020թ. օգոստոսի 12-ից 20-ը ներառյալ տարեկան ծրագրով ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն համայնքում իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերվել են 6 նպատակային նշանակության, 7 գործառնական նշանակության և 6 օտարման կարգի խախտումներ և կազմվել է 26.08.2020թ. N12 ակտը, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 300000 ՀՀ դրամ, իսկ տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացված 02.09.2020թ. N 06-13-12 որոշմամբ ակտում արձանագրված խախտման համար ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն համայնքի ղեկավարը ենթարկել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ տուգանք 300000 ՀՀ դրամ գումարի չափով:

Տարեկան ծրագրով ՀՀ Արարատի մարզի Սիս համայնքում իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերվել են 3 նպատակային նշանակության, 1 օտարման կարգի խախտում, 1 ձկնաբուծական լճերը դեռևս 2012 թվականի ապրիլին կառուցված ու 2014թ-ին նպատակային նշանակությունը փոխված և 1 օտարման ոչ ենթակա հողամասի օտարման խախտումներ և կազմվել է 26.08.2020թ. N13 ակտը, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 600000 ՀՀ դրամ, իսկ տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացված 02.09.2020թ. N 06-13-13 որոշմամբ ակտում արձանագրված խախտումների համար ՀՀ Արարատի մարզի Սիս համայնքի ղեկավարը ենթարկել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակել է վարչական տույժ՝ տուգանք 600000 ՀՀ դրամ գումարի չափով: Ակտի 3-րդ և 4-րդ կետերում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտի մեկ օրինակը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

Տարեկան ծրագրով ՀՀ Արարատի մարզի Փոքր Վեդի համայնքում իրականացված ստուգման արդյունքում պարզվել է, որ սխալ է կազմված համայնքի հողային հաշվեկշիռը, որը հետագայում դառնում է մարզի և այնուհետ հանրապետության հողային հաշվեկշռի մի մասը: Համայնքում հայտնաբերվել են թվով 4 նպատակային նշանակության, 9 օտարման կարգի խախտում, 1 ձկնաբուծական լճերը դեռևս 2012 թվականի ապրիլին կառուցված ու 2014թ-ին նպատակային նշանակությունը փոխված և 1 օտարման ոչ ենթակա հողամասի խախտումներ և

կազմվել է 26.08.2020թ. N14 ակտը, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 250000 ՀՀ դրամ, իսկ տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացված 02.09.2020թ. N 06-13-14 որոշմամբ ակտում արձանագրված խախտումների համար ՀՀ Արարատի մարզի Փոքր Վեդի համայնքի ղեկավարը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակել է վարչական տույժ՝ տուգանք 250000 ՀՀ դրամ գումարի չափով:

Տարեկան ծրագրով ՀՀ Արարատի մարզի Շահումյան համայնքում իրականացված ստուգման արդյունքում պարզվել է, որ սխալ է կազմված համայնքի հողային հաշվեկշիռը, որը հետագայում դառնում է մարզի և այնուհետ հանրապետության հողային հաշվեկշռի մի մասը: Համայնքում հայտնաբերվել են 3 նպատակային նշանակության, 5 գործառնական նշանակության, 5 օտարման կարգի խախտումներ և 4 մասնավորեցման ոչ ենթակա հողամասերի օտարման և 1 հանքի ու խճաքարիի մանրման սարքի ապօրինի տեղադրման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 26.08.2020թ. N15 ակտը, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 300000 ՀՀ դրամ, իսկ տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացված 02.09.2020թ. N 06-13-15 որոշմամբ ակտում արձանագրված խախտման համար ՀՀ Արարատի մարզի Շահումյան համայնքի ղեկավարը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ տուգանք 300000 ՀՀ դրամ գումարի չափով: Ակտի 4-րդ կետում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտի մեկ օրինակը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

Տարեկան ծրագրով ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքում իրականացված ստուգման արդյունքում պարզվել է, որ սխալ է կազմված համայնքի հողային հաշվեկշիռը, որը հետագայում դառնում է մարզի և այնուհետ հանրապետության հողային հաշվեկշռի մի մասը: Համայնքում հայտնաբերվել են թվով 4 նպատակային նշանակության, 14 գործառնական նշանակության, 5 օտարման կարգի խախտումներ և ընդհամենը 314,36048 հա հողամասերի՝ քաղաքաղաքացիների սեփականությունը հանդիսացող 127,10137 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ վարելահող գործառնական նշանակության հողամասերում, 40,36 հա մակերեսով արոտ գործառնական նշանակության հողամասերում, 0,45 հա մակերեսով պտուղ գործառնական նշանակության հողամասում և 0,12428 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ այլ գործառնական նշանակության հողամասում առանց որևիցէ օրինական և նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ փաստաթղթերի առկայության ինքնակամ կառուցվել են ձկնաբուծական լճեր: Համայնքի սեփականությունը հանդիսացող և քաղաքացիներին վարձակալությամբ տրամադրված 133,4952 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ վարելահող գործառնական նշանակության հողամասերում, 2,92766 հա մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասերում և ենթավարձակալությամբ տրամադրված 9,9հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ վարելահող գործառնական նշանակության հողամասերում առանց որևիցէ

օրինական և նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ փաստաթղթերի առկայության ինքնակամ կառուցվել են ձկնաբուծական լճեր խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 26.08.2020թ. N15 ակտը, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 300000 ՀՀ դրամ, իսկ տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացված 02.09.2020թ. N 06-13-16 որոշմամբ ակտում արձանագրված խախտման համար ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի ղեկավարը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ տուգանք 300000 ՀՀ դրամ գումարի չափով: Ակտի **4-րդ** կետում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտի մեկ օրինակը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

Ընդհանուր առմամբ ՀՀ Արարատի մարզի 5 համայնքներում իրականացված ստուգումների ընթացքում բացահայտվել է 80 խախտում: Ըստ համայնքների խախտումներն ունեն հետևյալ բաշխվածությունը.



2020 թվականի հունվարին Տեսչական մարմին է ներկայացվել «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման վերաբերյալ գրություն, որի հիման վրա իրականացվել է ստուգում Արարատի մարզի Արգավանդ համայնքում: Ստուգման արդյունքում կազմվել է ակտ: Բացահայտված խախտումները վերացնելու և պատասխանատու պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով միջնորդություն է ներկայացվել ՀՀ համապատասխան մարզպետին:

Հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից ՔՏՀԱՏՄ ուղղված գրությունը, կապված Աբովյան համայնքում հողային հարաբերություններին և քաղաքաշինական գործունեությանը առնչվող հարցերի ուսումնասիրման խնդիրների ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ Աբովյան համայնքում Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի մարտի 5-ից 6-ը ներառյալ իրականացվել է ըստ անհրաժեշտության ստուգում, որի ընթացքում բացահայտվել են հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու հետ կապված խախտում, ինչի վերաբերյալ 09.03.2020թ. կազմվել է N 3 ակտը: Ներկայացվել է միջնորդություն ՀՀ Կոտայքի մարզպետին՝ արձանագրված խախտման համար Աբովյան համայնքի պաշտոնատար անձանց ենթարկել վարչական պատասխանատվության, միաժամանակ պարտավորեցնելով խախտումը վերացնել ողջամիտ ժամկետներում:

2020թ. մայիսի 26-ին ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի համայնքում ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից ստացված գրությունում նշված խնդիրների ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում կազմվել է Վարչական իրավախախտումների N4 ակտը, համաձայն, որի վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է (150000) հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ և միջնորդություն է ներկայացվել ՀՀ Կոտայքի մարզպետին համապատասխան պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու և ողջամիտ ժամկետում խախտումը վերացնելու համար:

Քաղաքացու բողոքի հիման վրա 2020թ. մայիսի 27-ին ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքում: Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 1 խախտում, կազմվել է Վարչական իրավախախտումների N05 ակտը, համաձայն որի վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է հարյուր հիսուն հազար (150000) ՀՀ դրամ և միջնորդություն է ներկայացվել ՀՀ Կոտայքի մարզպետին համապատասխան պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու և ողջամիտ ժամկետում խախտումը վերացնելու համար:

2020թ. հունիսի 5-ից 8-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Արագածոտնի մարզի Ակունք համայնքում ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում կազմվել է Վարչական իրավախախտումների N6 ակտը: Համայնքում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտի մեկ օրինակը ուղղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

Քաղաքացու բողոքի հիման վրա 2020թ. հունիսի 18-ից 19-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում, որի արդյունքում պարզվել է, որ համայնքի ղեկավարը ՀՀ հողային օրենսդրության պահանջների խախտում թույլ չի տվել, ինչի մասին կազմվել է N1 տեղեկանքը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ստացված գրությունում բարձրացված խնդիրները պարզաբանելու նպատակով 2020թ. հունիսի 18-ից 19-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում: Ստուգման արդյունքում կազմվել է տեղեկանք: Ըստ ուսումնասիրված փաստաթղթերի ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ համայնքի ղեկավարը խախտում թույլ չի տվել:

2020 թվականի հուլիսի 10-ին Փարաքար համայնքում իրականացված ըստ անհրաժեշտության ստուգման արդյունքում փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ սխալ է կազմված համայնքի հողային հաշվեկշիռը, որը հետագայում դառնում է մարզի և այնուհետ հանրապետության հողային հաշվեկշռի մի մասը: Համայնքում հայտնաբերվել են 36 խախտումներ և կազմվել է 14.07.2020թ. N07 ակտը, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 150000 ՀՀ դրամ: Տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացված 20.07.2020թ. N 06-13-8 որոշմամբ ակտում արձանագրված խախտումների և թերությունների վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզպետին, տեսչական մարմնի 14.07.2020թ. N07 ակտի 1-ին և 2-րդ կետերում արձանագրված խախտումների համար **Փարաքար** համայնքի համապատասխան պաշտոնատար անձանց ենթարկել վարչական պատասխանատվության, միաժամանակ, պարտավորեցնելով խախտումները վերացնել ողջամիտ ժամկետներում, իսկ 14.07.2020թ. N07 ակտի 2-րդ կետի 8)-րդ ենթակետում նշված խախտման արդյունքում՝ խախտվել են հողերի օգտագործման գործառնական նշանակությունները և համայնքի բյուջե չեն մուտքագրվել զգալի չափով գումարներ: Ակտի 3-րդ կետում նշված խախտման արդյունքում ինքնակամ կառույցը հաշվի չառնելու պատճառով համայնքի բյուջե չեն մուտքագրվել զգալի չափով գումարներ և հայտնաբերված խախտումներին իրավական գնահատական տալու համար տեսչական մարմնի 14.07.2020թ. կազմված N07 ակտի 2-րդ կետի 8)-րդ ենթակետում նշված և 3-րդ կետում արձանագրված խախտումները ուղարկվել են իրավասու մարմիններ:

2020 թվականի հուլիսի 17-ից-20ը ներառյալ ՀՀ Գեղարքունիքի մարզի **Զոլաքար** համայնքում իրականացված ըստ անհրաժեշտության ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է 21.07.2020թ. N09 ակտը և տեսչական մարմնի ղեկավարի 23.07.2020թ. N 06-13-9 որոշումը, որով ակտում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտի մեկ օրինակը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

2020 թվականի հուլիսի 24-ից-27ը ներառյալ ՀՀ Կոտայքի մարզի **Քախսի** համայնքում իրականացված ըստ անհրաժեշտության ստուգման արդյունքում համայնքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է 28.07.20թ. թիվ 10 ակտն, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 150000 ՀՀ դրամ: Ակտում արձանագրված խախտումների վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարը իր 05.08.2020թ. N 06-13-10 որոշմամբ համայնքի ղեկավարին ենթարկել է վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տուգանք, որի չափը կազմել է 150000 ՀՀ դրամ և պարտավորեցրել է խախտումները վերացնել ողջամիտ ժամկետներում:

2020թ. հուլիսի 31-ից օգոստոսի 3-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում: Ստուգման արդյունքում համայնքում հայտնաբերվել է 2 խախտում և կազմվել է 04.08.2020թ. N11 ակտը, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 200000 ՀՀ դրամ, իսկ տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացված 13.08.2020թ. N 06-13-11 որոշմամբ ակտում արձանագրված խախտման համար ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավարը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է վարչական տույժ՝ տուգանք 200000 ՀՀ դրամ գումարի չափով: Ակտի 2-րդ կետում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտի մեկ օրինակը կուղարկվի համապատասխան իրավասու մարմիններ: Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով՝ հանձնարարվել է ստուգման ակտում արձանագրված խախտումները վերացնել եռամսյա ժամկետում և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմին:

2020թ. օգոստոսի 21-ից 25-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում: Համայնքում հայտնաբերվել են 1 նպատակային նշանակության և 1 տրամադրման կարգի խախտում և կազմվել է 27.08.2020թ. N17 ակտը, որում վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է 250000 ՀՀ դրամ, իսկ տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացված 04.09.2020թ. N 06-13-17 որոշմամբ ակտում արձանագրված խախտումների համար ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարը ենթարկել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակել է վարչական տույժ՝ տուգանք 250000 ՀՀ դրամ գումարի չափով: Ակտում արձանագրված հնարավոր ֆինանսական չարաշահման և խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտի մեկ օրինակը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

2020թ. սեպտեմբերի 3-ից-4-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքում: Համայնքում հայտնաբերվել են խախտումներ, որի համար կազմվել է 07.09.2020թ. N18 ակտը: Ակտում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

ՀՀ Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունից ստացված գրության մեջ նշված խնդիրները պարզաբանելու նպատակով 2020թ. դեկտեմբերի 1-ից-7-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքում: Ստուգման արդյունքում կազմվել է 08.12.2020թ. N19 ակտը և ՔՏՀԱՏՄ ղեկավարի

17.12.2020թ. N06-13-19 որոշումը: Ակտում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

Քաղաքացու դիմումում բարձրացված խնդիրները պարզաբանելու նպատակով 2020թ. դեկտեմբերի 1-ից-7-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքում: Ստուգման արդյունքում կազմվել է 08.12.2020թ. N20 ակտը և ՔՏՀԱՏՄ ղեկավարի 17.12.2020թ. N06-13-20 որոշումը: Ակտում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

ՀՀ Քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունից ստացված գրության մեջ նշված խնդիրները պարզաբանելու նպատակով 2020թ. դեկտեմբերի 10-ից 14-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում: Արդյունքում կազմվել է 15.12.2020թ. N21 ակտը և ՔՏՀԱՏՄ ղեկավարի 28.12.2020թ. N06-13-21 որոշումը: Ակտում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտը ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

Տեսչական մարմնի կողմից հողօգտագործման բնագավառում իրականացված ստուգումների 11,1% կազմում են տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները և 88,9%՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումները: Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել է 10 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 3: Ըստ անհրաժեշտության կատարված ստուգումների միջին տևողությունը կազմում է 1,8 օր, մարդկային ռեսուրսը՝ 2,5:

«Հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի և ՀՀ Վարչապետի հետ համաձայնեցված գրաֆիկով՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում ստուգումներ են իրականացվել ՀՀ Սյունիքի մարզի 2, Կոտայքի մարզի 6, Լոռու մարզի 3, Արագածոտնի մարզի 4 և Արարատի մարզի 6 համայնքներում: 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 2 օր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացվել է միջինում 0,12 մարդկային ռեսուրս:

<u>Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում</u>

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված էր իրականացնել ստուգումներ 784 արտադրական նշանակության օբյեկտներում,

բենզալցակայաններում, գազալցակայաններում, առևտրի և հասարակական սննդի օբյեկտներում, պայթուցիկ նյութերի, նավթամթերքի, հեղուկ և բնական գազերի պահեստներում: Սակայն հաշվի առնելով ՀՀ-ում ստեղծված իրավիճակը՝ Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարագրով ստուգումները կասեցվել են: Արդյունքում, ավարտվել են ստուգումները տնտեսավարող սուբյեկտների 355 օբյեկտներում (նախատեսված ընդհանուր քանակի 45,2%): Եվս 56 օբյեկտներում կատարվել են ըստ անհրաժեշտության ստուգումներ, այդ թվում՝ 51 օբյեկտներում՝ Վարչապետի հանձնարարականով, 2 օբյեկտում՝ հանրությունից ստացված դիմում-բողոքների հիման վրա և 3 օբյեկտներում՝պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Նշված ժամանակահատվածում իրականացվել է 99 վերստուգում, որոնցից 43-ը՝ 2019 թվականի, 56-ը՝ 2020 թվականի ստուգումների արդյունքում տրված կարգադրագրերի կատարումն վերահսկելու նպատակով:

2020թ. ընթացքում հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ընդհանուր թվով 406 տնտեսվարող սուբյեկտների (ընդ որում՝ 25-ը էներգետիկայի և էներգասպառման, իսկ 1-ը՝ տրանսպորտի բնագավառների հետ համատեղ) 510 օբյեկտներում իրականացվել են ստուգումներ և վերստուգումներ, ընդ որում՝ 86-ը (16.9%) Կոտայքի, 69-ը (13.5%) Արմավիրի, 56-ը (11%) Արագածոտնի, իսկ 46-ը (9%) Գեղարքունիքի մարզերում:

2019 թվականի ընթացքում ՀՀ վարչապետի հանձնարարկանով իրականացվել էր 135 ստուգում, որից 45-ը (33,3%) Երևանում, 16-ական Արմավիրի (11,8%) և Լոռու (11,8%) մարզերում, 11-ը (8%) Կոտայքի մարզում:

Ստորև ներկայացվում է 2019 և 2020 թվականներին տնտեսվարող սուբյեկտների օբյեկտներում իրականացված ստուգումների և վերստուգումների քանակի բաշխվածության գրաֆիկական պատկերը.



2020թ. ընթացքում կատարված վերստուգումների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



2020 թվականի ստուգումների արդյունքում արձանագրվել է 2099 խախտում, իսկ 2019 թվականին ստուգումներով բացահայտվել էր 1194 խախտում: Ստորև արտացոլված է արձանագրված ընդհանուր 3293 խախտումների համեմատական բաշխվածությունն ըստ տարիների և մարզերի.



Իրականացված ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրվել է 33 տեղեկանք՝ խախտումների բացակայության վերաբերյալ: Եվս 27 տեղեկանք տրամադրվել է վերստուգումների արդյունքում:



Վերստուգումներով պարզվել է նաև, որ տնտեսավարողների կողմից վերացվել է 580 խախտում, ինչը կազմում է արձանագրված խախտումների ընդհանուր քանակի (3293) 1.76%-ը: Եվս 3 վերստուգում դեռևս ընթացքի մեջ է:

2020 թվականի ստուգումների և վերստուգումների ընթացքում.

1. ընդհանուր նշանակության 24 պահեստներում և բազաներում բացահայտվել է 85 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 4%-ը (ընդհանուր խախտումների քանակը 2099): 9 օբյեկտների (որտեղ արձանագրվել է 77 խախտում) վերստուգումների արդյունքում խախտումները նվազել են 52-ով (67,5%-ով):

Հիմնական խախտումներն են.

- *Պահեստները սարքավորված չեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով-9 դեպք*
- *Հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով-8 դեպք*
- *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում-7 դեպք:*

Ստուգումների և վերստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 20 կարգադրագիր, իսկ խախտումների բացակայության վերաբերյալ՝ 4 տեղեկանք:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսակետից առավել վտանգավոր են՝

- ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍՊԸ,
- ԹՈՒՆԵԼ ՓԲԸ,
- ԱԼՅԱՆՍ-ՏԵՐՄԻՆԱԼ ՍՊԸ,
- ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԲԱԶԱ ՍՊԸ:

2. առևտրի և հասարակական սննդի 78 օբյեկտներում բացահայտվել է 236 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 11,2%-ը (ընդհանուր խախտումների քանակը 2099): 10 օբյեկտներում (որտեղ ընդհանուր առմամբ արձանագրվել էր 41 խախտում) իրականացված վերստուգումների արդյունքում խախտումները նվազել են 36-ով (87,8%-ով):

Հիմնական խախտումներն են.

- *Օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով-35 դեպք*
- *Օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով-28 դեպք*
- *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին-33 դեպք:*

Ստուգումների և վերստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 63 կարգադրագիր, իսկ խախտումների բացակայության վերաբերյալ՝ 15 տեղեկանք:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսակետից առավել վտանգավոր եռյակում են՝

- ՆԱԻՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՌԱԶՄԻԿԻ Ա/Ձ,
- ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՔՈԼԵԹ ՍՊԸ,
- ԽՐՃԻԹ ԼԻՍ ԵՒ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ ԵՂՆԻԿ ՍՊԸ:

3. <u>արտադրական 128 կազմակերպությունում</u> բացահայտվել է 620 խախտում, ինչը կազմում է արձանագրված խախտումների ընդհանուր քանակի 29,5%-ը: 23 օբյեկտների (որտեղ ընդհանուր առմամբ արձանագրվել էր 183 խախտում) վերստուգումների արդյունքում խախտումները նվազել են 163-ով (89.1%-ով):

Հիմնական խախտումներն են.

- *Օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով-81 դեպք*
- *Շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով-78 դեպք*
- *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին-63 դեպք:*

Ստուգումների արդյունքում կազմվել և տնտեսվարող սուբյեկտներին է տրամադրվել պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 122 կարգադրագիր, ինչպես նաև թերությունների բացակայության մասին 6 տեղեկանք:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսակետից առավել վտանգավոր եռյակում են՝

- ԳԼՈՐԻԱ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ ՍՊԸ,
- ՎԱՆՊՈԼԻՄԷԴ ՍՊԸ,
- ՎԱՌՄԱՇ ՍՊԸ:

4. <u>բենզալիցքավորման 46 կայաններում</u> բացահայտվել է 105 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 5%-ը: 3 օբյեկտների (որտեղ ընդհանուր առմամբ արձանագրվել էր 5 խախտում) վերստուգման արդյունքում խախտումների 80%-ը վերացվել է:

Հիմնական խախտումներն են.

- *Արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից առնվազն 40մ հեռավորության վրա գտնվող առնվազն 2 հրշեջ հիդրանտների կամ առնվազն 100խմ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով-21 դեպք*
- *Պահանջվող միջտարածությունները պահպանված չեն-18 դեպք*
- *Տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով-13 դեպք:*

Ստուգումների և վերստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 39 կարգադրագիր, իսկ խախտումների բացակայության վերաբերյալ 6 տեղեկանք:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսակետից առավել վտանգավոր եռյակում են՝

- ԱՐՄԵՆԱԿ ԽԼՈՅԱՆ ՀԱՅՐՈՅԻ Ա/Ձ
- ԱՐՍԵՆ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ Ա/Ձ
- ՖԼԵԾ ՍՊԸ:

5. ստուգված գազալցավորման 125 կայաններում բացահայտվել 556 խախտում, ինչը կազմում է արձանագրված բոլոր խախտումների 26,5%-ը: 38 օբյեկտների (որտեղ ընդհանուր առմամբ արձանագրվել էր 294 խախտում) վերստուգումների արդյունքում վերացված խախտումների թիվը 226 է (76.9%-ով): 18 ԱԳԼՃԿ-ների ղեկավարներին տրվել են տեղեկանքներ՝ թերությունների բացակայության վերաբերյալ: Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել են պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 107 կարգադրագիր:

Հիմնական խախտումներն են.

- *Պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն-56 դեպք*
- *Արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից առնվազն 40մ հեռավորության վրա գտնվող առնվազն 2 հրշեջ հիդրանտների կամ առնվազն 100 խմ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով-44 դեպք*
- *Տեղադրված չեն գազի վտանգավոր կոնցենտրացիայի ազդանշանման սարքեր-38 դեպք:*

6. ստուգված նավթամթերքների 32 պահեստներում բացահայտվել է 159 խախտում, ինչը կազմում է բոլոր խախտումների 7,6%-ը: 3 վերստուգումների արդյունքում խախտումները 13-ից նվազել են 6-ով (46.2%-ով):

Հիմնական խախտումներն են.

- *Արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50խմ տարողությամբ հակահրդեհային ջրավազան չկա-14 դեպք*
- *Պահեստները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով-14 դեպք*
- *Պահանջվող միջտարածությունները պահպանված չեն-11 դեպք:*

Ստուգումների և վերստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 31 կարգադրագիր, իսկ խախտումների բացակայության վերաբերյալ՝ 1 տեղեկանք:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսակետից առավել վտանգավոր եռյակում են՝

- ՄՈՍԷՍՔՈ ՍՊԸ,
- ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ,
- ԽԱՉՀԱՐ ՍՊԸ:

7. պայթուցիկ նյութերի, ինչպես նաև հեղուկ ու բնական գազերի 22 պահեստներում բացահայտվել է 94 խախտում, ինչը կազմում է խախտումների ընդհանուր քանակի 4.5%-ը: 2 վերստուգման արդյունքում խախտումներ չեն վերացվել:

Հիմնական խախտումներն են.

- *Պահեստները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով-13 դեպք*
- *Պահեստները սարքավորված չեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով-8 դեպք*
- *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը գտնվում են անսարք վիճակում-7 դեպք*
- *Հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին-7 դեպք:*

Ստուգումների և վերստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 19 կարգադրագիր, իսկ խախտումների բացակայության վերաբերյալ՝ 3 տեղեկանք:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսակետից առավել վտանգավոր եռյակում են՝

- ԲԱԳԱՎԱՆ ՓԲԸ,
- ՀՈԼԻԴԵՅ ԴԻԶԱՅՆ ՍՊԸ,
- ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՅՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ ՓԲԸ:

Այլ ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների մոտ իրականացված ստուգումների և դրանց արդյունքում բացահայտած խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակում:

գործունեության ոլորտը	տնտ. սուբյեկտ	խախտում	տեղեկանք	կարգադ-րագիր
բնակելի շենքեր, հյուրանոցներ և հանրակացարաններ	3	12	0	3
գիտական և ուսումնական հաստատություններ	2	8	0	2
գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող	5	13	0	2
առողջարարական, հանգստյան տների և զբոսաշրջության հաստատություններ	1	11	0	1
առողջապահական հիմնարկներ	8	35	1	9
կառավարման հիմնարկներ	1	6	0	1
մշակութային հիմնարկներ	5	41	0	5
Տրանսպորտային (ավտոմոբիլային և երկաթուղային)	2	9	0	1
ընդամենը	**27**	**135**	**1**	**24**

Տվյալ գործունեության ոլորտներում արձանագրված խախտումները կազմում են խախտումների ընդհանուր քանակի 6.4%-ը:

2020թ. ստուգման արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ 140 դեպքում (խախտումների 7%) օբյեկտները ապահովված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով, 109 դեպքում (խախտումների 5.5%) օբյեկտներն ապահովված չեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներով, 103 դեպքում (խախտումների 5.2%) հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին, այլ խախտումներն՝ ըստ պատկերի.



2019թ. ստուգման արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ 65 օբյեկտ (ստուգման ենթարկված օբյեկտների 48%) ապահովված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով, 58 օբյեկտներում (43%) հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին, 37-ում (27,4%)՝ հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը գտնվում են անսարք վիճակում:



Տեսչական մարմնի կողմից 2020 թվականին իրականացվել է 510 ստուգում, որից տարեկան ծրագրով 355 ստուգում (ստուգումների ընդհանուր քանակի 69.2%-ը), ըստ անհրաժեշտության՝ 56 ստուգում (10,8%) և 99 վերստուգում (19%):

1 տարեկան ծրագրով ստուգման միջին տևողությունը կազմել է 2.9 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.4-ը:

1 ըստ անհրաժեշտության ստուգման միջին տևողությունն կազմել է 2.1 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.1-ը:

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1.6 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2-ը:

Հրդեհների և տեխնածին վթարների կանխարգելման, դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցման, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով՝ յուրաքանչյուր ստուգման ընթացքում տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել է խորհրդատվություն:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 385 ստուգումներից իրականացվել է 64-ը, ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 16.62%-ը, ընդ որում 29-ը (45%) Երևանում, 8-ը (12%) Կոտայքի մարզում, 6-ը (9%) Արմավիրի մարզում, 5-ը (8%) Գեղարքունիքի մարզում, 4-ը (6%) Տավուշի մարզում, 3-ական (5%) Արարատի և Շիրակի մարզերում, 2-ական (3%) Սյունիքի, Լոռու մարզերում և 1-ական (2%) Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերում:



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 438 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Հիմնական խախտումները վերաբերում են.

- շինարարություն իրականացնող կազմակերպության (կապալառուի) գործունեությանը,
- շինարարության նկատմամբ հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության գործունեությանը,
- շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության գործունեությանը:

Խախտումների բացակայության վերաբերյալ տրվել է 20 տեղեկանք, կազմվել և տրամադրվել է 44 պարտադիր կատարման ցուցումներ:



1 ստուգման միջին տևողությունը կազմել է 5.52 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 1.92-ը: Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով:

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

2020 թվականի ընթացքում տրանսպորտի անվտանգության մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ



ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթա-կարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորա-փոխադրումներ իրակա-նացնող երթուղիների սկզբնակետ/ վերջնա-կետերում պարբերաբար իրականացվել է միջպետա-կան, միջմարզային, ներ-մարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորա-փոխադրումների սպասարկ-ման կազմակերպման գործընթացի, միջպետական ավտոբուսային փոխադրումների ուղեթոմսերի վաճառքի, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության նկատմամբ 11122 վերահսկողական միջոցառում, ինչը 8,8 անգամ ավելին է, քան 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքը (1261 մշտադիտարկում):

Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 6940 վերահսկողական միջոցառում (ընդհանուր քանակի 62,4%), որոնց 9,1%-ը Կոտայքի մարզում, 15,5%-ը Շիրակի մարզում, 17,7%-ը Երևանում և այլն՝ համաձայն պատկերի



Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ 2019 թվականի ընթացքում իրականացվել էր 961 մշտադիտարկում, ինչը 7,2 անգամ պակաս է 2020 թվականի ընթացքում կատարված աշխատանքի ծավալից:

2020 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական միջոցառումների ընդհանուր քանակի 29,6%-ը կազմում է թեթև մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների նկատմամբ կատարված վերահսկողական բնույթի աշխատանքը: Ընդ որում, Արմավիրի մարզում իրականացվել է 1197 (36,4%) միջոցառում, Գեղարքունիքում՝ 434 (13,2%), Սյունիքում՝ 310 (9,4%), Երևանում՝ 236 (7,2%), Տավուշում՝ 229 (6,9%), Կոտայքում՝ 224 (6,8%), Շիրակում՝ 203 (6,2%), Վայոց Ձորում՝ 193 (5,8%), Արագածոտնում՝ 170 (5,2%), Լոռիում՝ 53 (1,6%), Արարատում՝ 40 (1,2%):

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների (բացառությամբ Երևանի) տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության նկատմամբ վերահսկողական միջոցառում: Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել են միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 665 գովազդային վահանակներ (2019 թվականի ընթացքում գույքագրվել է թվով 369 գովազդային վահանակ):

Հ/Հ	Մարզեր	Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների քանակը
1	Արագածոտն	26
2	Արարատ	81
3	Արմավիր	33
4	Գեղարքունիք	254
5	Լոռի	53
6	Կոտայք	60
7	Շիրակ	26
8	Սյունիք	34
9	Վայոց Ձոր	76
10	Տավուշ	22
Ընդամենը		**665**

Հիմք ընդունելով ՀՀ տարածքում գործող տեխնիկական զննման կայաններում 2020 թվականի ընթացքում տեխնիկական զննություն անցած տրասպորտային միջոցների թվականաքի վերլուծության արդյունքները՝ Տեսչական մարմնի տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվել է 107 ուսումնասիրություն և դիտարկում՝ ըստ պատկերի (2019 թվականի կատարվել է թվով 66 ուսումնասիրություն և դիտարկում):

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու նպատակով ՀՀ պարետի որոշումներով և ցուցումներով սահմանված պայմանների պահպանման և ապահովման համար տարածքային բաժնի տրանսպորտի անվտանգության բաժամունքի մասնագետների և ՀՀ «Ճանապարհային Ոստիկանություն» ծառայության աշխատակիցների հետ համատեղ իրականացվել են կանոնավոր և ոչ կանոնավոր երթուղիներում շահագործվող գերբեռնված տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների սահմանափակման և կանխարգելման աշխատանքներ, ինչպես նաև վերահսկողություն է իրականացվել ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների ամենօրյա ախտահանման աշխատանքների նկատմամբ: Կատարված աշխատանքի արդյունքում բացահայտվել են դեպքեր, երբ երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցները իրականացրել են երթևեկը նստատեղերի քանակից ավելին նստեցումներով՝ ուղևորների գերծանրաբեռնվածությամբ, առանց ախտահանիչ նյութի և ուղևորի կամ վարորդի կողմից դիմակ չկրելու փաստով: ՀՀ ՔՏՀԱՏՄ տրանսպորտի անվտանգության մասնագետները և ՀՀ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության աշխատակիցների համագործակցության արդյունքում գերբեռնված տրանսպորտային միջոցները տեղափոխվել են ՀՀ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հատուկ պահպանվող տարածք:

Կատարվել են բազմաթիվ վերահսկողական միջոցառումներ ՃՈ հետ համատեղ, որոնց ընթացքում կազմվել են վարչական պատասխանատվության ենթարկելու 306 արձանագրություններ (ընդ որում Երևանում՝ 109, մարզերում՝ 197) և տրվել են պարտադիր կատարման ցուցումներ, բաժանվել են ուղեցույցեր թե՛ տնտեսվարող կազմակերպության ղեկավարներին, թե՛ վարորդներին:

ՀՀ պարետին ներկայացվել է 3 գրություն տրանսպորտային միջոցների գործունեությունը 72 ժամով կասեցնելու վերաբերյալ:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում իրականացվել են թվով 1257 <u>տեխնիկական ստուգումներ</u>, որից 655-ը՝ (52%) էլեկտրաէներգետիկական համակարգում և 602-ը՝ (48%) գազամատակարարման համակարգում:



Արդյունքում տրվել է 1046 (83%) գործարկման եզրակացություն, իսկ թվով 211 (17%) տեղակայանքների գործարկումները՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են:



Նախորդ տարվա ընթացքում իրականացվել է 1259 տեխնիկական ստուգում, որից 737-ը (58%) գազամատակարարման համակարգում:



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էներգատեղակայանքներում 2019 թվականին գրանցվել էր 20 մահվան ելքով պատահար, 2020 թվականին ստուգումների տարեկան ծրագրում առաջնահերթությունը տրվել էր էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին (մասնաճյուղերին) և իրենց պատկանող էներգատեղակայանքներին: 2020 թվականի մահացու ելքով պատահարների քանակը նվազել է 30 %-ով (ընդամենը՝ 14 դեպք):

Մահացու ելքով պատահարների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի և տարիների ունի հետևյալ պատկերը՝



ՀՀ կառավարության սահմանած կարգով <u>մասնագիտական քննություններ</u> են կազմակերպվել և իրականացվել 19 պատահարների վերաբերյալ, որոնցից 5-ը տեղի էին ունեցել 2019թ., ընդ որում Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում՝ 3, Լոռու և Արարատի մարզերում՝ 2-ական, Երևանում, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում՝ մեկական: Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են 1 համակարգային պատահարի մասնագիտական քննության:

Նախորդ տարվա ընթացքում 17 պատահարների վերաբերյալ ՀՀ կառավարության սահմանած կարգով կազմակերպվել և իրականացվել են մասնագիտական քննություններ, ընդ որում Երևանում՝ 4, Լոռու մարզում՝ 3, Կոտայքի մարզում՝ 5, Շիրակի և Արագածոտնի մարզերում՝ 2-ական, Սյունիքի, Վայոց Ձորի, Արմավիրի և Տավուշի մարզերում՝ մեկական: Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են 1 համակարգային պատահարի մասնագիտական քննության:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովից ստացվել և ուսումնասիրվել է հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված 86 հողաշինարարական գործ: Արդյունքում տրվել է 53 դրական և 33 բացասական կարծիք:



<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

Տեսչական մարմնի կողմից հաշվառվել և վերլուծվել է 2020 թվականի ընթացքում ՀՀ-ում տեղի ունեցած 6377 հրդեհի դեպք (նախորդ տարվա 9984 հրդեհի փոխարեն): Հրդեհների ընդհանուր քանակի 66,7%-ը (4253 դեպք) տեղի է ունեցել բուսածածկ տարածքում:



Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է հրդեհների ընդհանուր քանակի նվազում 36,1%-ով, իսկ խոտածածկ տարածքներում՝ 46%-ով, ինչը պայմանավորված է նաև Տեսչական մարմնի նախաձեռնությամբ մինչև հրդեհավտանգ ժամանակաշրջանը խոտածածկ տարածքներում հրդեհները կանխելու ուղղությամբ իրականացված միջոցառումներով: Մասնավորապես,

- կազմակերպվել են համատեղ խորհրդակցություններ՝ Երևանի քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների, Հայաստանի փրկարար ծառայության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ,

- նախազգուշական նամակներ են ուղարկվել Գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ բոլոր մարզպետներին: Տեսչական մարմինն ստացել է 97 պատասխան գրություն ձեռնարկված հակահրդեհային միջոցառումների վերաբերյալ:

1012 հրդեհների վերաբերյալ կազմվել են ակտեր: Տեղի ունեցած հրդեհներից զոհվել է 7 (3-ը բնակելի տարածքում, 4-ը՝ ավտոմեքենաներում), իսկ վնասվածքներ է ստացել 11 մարդ, որից 3-ը՝ մարդատար մեքենաների հրդեհների հետևանքով, 8-ը՝ բնակելի տարածքում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 333 <u>հրդեհատեխնիկական հետազոտություն</u> (2019-ին՝ 1778 ՀՏՀ) տարբեր բնույթի օբյեկտներում, ընդ որում ՀՏՀ-ների ընդհանուր քանակի 58,2% (193 հատ) կատարվել է Երևանում գտնվող օբյեկտներում, 51 հետազոտություն (15,2%)՝ Արագածոտնի, 50 (15%)՝ Արմավիրում, 27 (8%)՝ Արարատի, 11 (3,3%)՝ Կոտայքի և 1 (0,3%)՝ Վայոց Ձորի մարզերում:

Բացահայտված հիմնական խախտումները վերաբերում են

- ✓ հակահրդեհային միջտարածություններին,
- ✓ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերին,
- ✓ էլեկտրական հաղորդալարերի մոնտաժման կանոններին,
- ✓ տարահանման ելքերին:

Երևան քաղաքում գտնվող 189 բենզալցակայանների հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում արձանագրվել է 578 խախտում, որոնք վերաբերում են



Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է 493 <u>եզրակացություն</u> նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանելիության վերաբերյալ: 2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է 414 <u>եզրակացություն:</u>

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 672 օբյեկտների <u>շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին,</u> որից 307-ը (45,7%) Երևանում: 2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 287 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, որից 180-ը (63%)՝ Երևանում:



Հրդեհ ազդարարող համակարգերի շահագործման վերաբերյալ 2020 թվականին տրամադրվել է 19 եզրակացություն, 2019-ին՝ 13:

Քաղաքաշինության բնագավառում

2020 թվականի ընթացքում կատարվել են 2880 դիտարկումներ և տեղազննումներ (2019 թվականին՝ 2749), որոնցից 903-ը (2019 թվականին՝ 594) ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում:



Կատարված աշխատանքն ըստ մարզերի ունի հետևյալ գրաֆիկական պատկերը՝



Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 2384 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին (2019 թվականին՝ 1750), այդ թվում Երևանում՝ 776 (32%), Լոռիում՝ 240 (10%), Գեղարքունիքում՝ 236 (10%), Կոտայքում՝ 222 (9%) և այլն՝ ըստ պատկերի:



Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 1501 դրական և 767 բացասական եզրակացություն:

Ըստ մարզերի կատարված աշխատանքն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



2019թ. տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 1266 դրական և 396 բացասական եզրակացություն:



Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են թվով 430 ինքնակամ կառույցներ ՀՀ ամբողջ տարածքում, այդ

թվում Արագածոտնի մարզում՝ 99 (23%), Կոտայքի մարզում՝ 96 (22%), Արարատի մարզում՝ 58 (14%) և Լոռու մարզում՝ 42 (10%): 2019թ. համեմատությամբ 2020թ.հայտնաբերվել է 19-ով ավելի ինքնակամ կառույց:



Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ, այն է՝ մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ: Համայնքների ղեկավարներին ներկայացվել են առաջարկություններ՝ իրենց իրավասության սահմաններում ինքնակամ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ և հետևանքները վերացնելու ուղղությամբ:

Իրավապահ մարմիններին և ՀՀ դատախազություն է ներկայացվել հաղորդում՝ քաղաքաշինության նորմերի խախտումների վերաբերյալ՝ ինչպես կառուցապատողների կողմից, այնպես էլ համայնքի ղեկավարների անգործության վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են տեղազննություններ և տրամադրվել են 192 համապատասխան եզրակացություններ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից մանկատան շրջանավարտներին բնակարանով ապահովելու ծրագրերի շրջանակում, բնակության համար օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխանելու, բնակարանների տրամադրման պիտանելիության վերաբերյալ :

Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչության կողմից 2020 թվականի ընթացքում վերլուծվել և ուսումնասիրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Տեսչական մարմնին հասցեագրված՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործերի փաթեթները, որի հիման վրա տարածքային բաժինները քննարկվող տարածքներում իրականացրել են ուսումնասիրություններ և տեղազննություններ ու կազմել են համապատասխան տեղեկանքներ: Քաղաքաշինական գործունեության վարչությունը տարածքային բաժինների կողմից ներկայացված տեղեկանքների հիման վրա պատրաստել է 90 պատասխան գրություն:

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 476 բողոք, որից 314-ը (66%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 77-ը (16,2%)՝ տրանսպորտի անվտանգության, 41-ը (8,6%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 25-ը (5,2%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 19-ը (4%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:



Ըստ ամիսների հանրությունից ստացված բողոքներն ունեն հետևյալ բաշխվածությունը՝

	տրանսպորտ	քաղշին	հրդեհային	էներգետիկա	գեոդեզիա
հունվար	4	7	8	1	1
փետրվար	3	15	9		1
մարտ	3	25	5	3	
ապրիլ	2	6		1	
մայիս	4	22		3	2
հունիս	19	49	2	1	3
հուլիս	13	58	8	1	1
օգոստոս	8	59	2	4	4
սեպտեմբեր	14	53	5	5	5
հոկտեմբեր	2	11	1	4	
նոյեմբեր	1	6	1	1	1
դեկտեմբեր	4	3		1	1
	77	314	41	25	19

Ընդ որում, ստացված բողոքների ընդհանուր քանակի 55,55%-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին: Ստորև բերված է բողոքների բաշխվածության գրաֆիկն ըստ տարածքային միավորների և բնագավառների



<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

2020 թվականին տրանսպորտի ոլորտի վերաբերյալ Տեսչական մարմին հասցեագրված թվով 77 դիմում-բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության, Երևանի, Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Արարատի տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են

- ✓ երթուղիների թերի շահագործմանը կամ չշահագործմանը,
- ✓ տրանսպորտային միջոցների սխալ կահավորմանը,
- ✓ չվացուցակների խախտումներին,
- ✓ ապօրինի ուղևորափոխադրումներին,
- ✓ սանիտարական կանոնների խախտմանը, ախտահանիչ նյութերի բացակայությանը, ուղեսրահում պաշտպանիչ դիմակներ չկրելու դեպքերին և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում ստացված բողոքներից 55-ը (71,4%) ներկայացվել է թեժ գծով:

Հանրությունից ստացված հիմնավոր 58 գրություններից և դիմում-բողոքներից լուծում են ստացել՝ 47-ը (81%), հիմնավոր չի 16 բողոք (ընդհանուր քանակի 20,8%):

Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են երթուղիների թերի շահագործմանը կամ չշահագործմանը, տրանսպորտային միջոցների սխալ կահավորմանը,

չվացուցակների խախտումներին, կանոնավոր և ոչ կանոնավոր ապօրինի ուղևորափոխադրումներին և այլն:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Հանրությունից ստացված 25 դիմում-բողոքներից 22-ը (88%) հիմնավոր են, 3-ը (12%)՝ ոչ հիմնավոր: Հիմնավոր բողոքներից 18-ը լուծում են ստացել (82%), 4-ն ընթացքի մեջ են: Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են

- մայրուղային գազատարների և էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիներում իրականացվող շինարարական աշխատանքներին,
- առանց սեփականատիրոջ հետ սահմանված կարգով համաձայնեցնելու՝ սեփականաշնորհված հողամասերի տարածքով գազատարների անցկացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում թեժ գծով բողոքներ չեն արձանագրվել:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրվել է 19 դիմում-բողոք, որոնցից հիմնավոր են 9, ոչ հիմնավոր՝ 10 բողոք, 6-ի հիման վրա կատարվել են ստուգումներ: Բոլոր հիմնավոր բողոքները լուծում են ստացել:

Թեժ գծով ստացվել է մեկ բողոք:

Դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են՝

- ✓ ապօրինի հողամասի օտարմանը,
- ✓ համայնքային հողերի վրա ինքնակամ կառուցապատմանը,
- ✓ ապօրինի շինթույլտվություններին,
- ✓ հողերի համադրմանը:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

2020 թվականի ընթացքում քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և Անհատ ձեռնարկատերերից (այսուհետ՝ Հանրություն) ստացվել է 41 դիմում-բողոք, որից 26-ը Երևանում գտնվող օբյեկտների վերաբերյալ, 4-ը՝ Արագածոտնի, 3-ական՝ Արմավիրի և Լոռու մարզերում և մեկական՝ Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում: Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիմնավոր են 26-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 63,4 տոկոսը, հիմնավոր չեն՝ 11-ը, ևս 4 բողոք գտնվում է ուսումնասիրության ընթացքում:: Հիմնավոր բողոքներից 7-ը (27%) լուծում է ստացել: Հանրությունից ստացված 2 բողոքի հիման վրա, որից մեկը ստացվել է թեժ գծով, իրականացվել են ստուգումներ: Կատարված ստուգումների և հետազոտությունների արդյունքում բացահայտված խախտումների վերաբերյալ կազմվել է 10 արձանագրություն: Բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են

- գոյություն ունեցող և նոր կառուցվող շինությունների միջև հակահրդեհային միջտարածության խախտումներին,
- գործող օբյեկտներում հրդեհային անվտանգության պահանջների խախտումներին:

Բողոքների 36,6 %-ը (15-ը) ստացվել է թեժ գծով:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 314 դիմում-բողոք: Դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

Հիմնավոր է եղել 252 դիմում, ոչ հիմնավոր՝ 49, լուծում է ստացել 150-ը (հիմնավոր բողոքների 60%), իսկ 113-ը գտնվում է ընթացքի մեջ:

2020 թվականին ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող քաղաքաշինական ոլորտում հանդիպող խնդիրները հիմնականում վերաբերվում են

- ՀՀ կառավարության N 596 որոշմամբ հաստատված կարգերի շեղումներով համայնքների ղեկավարների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրմանը
- համայնքների ղեկավարների կողմից նախագծման թույլտվությանը (ճարտարապետահատակագծային առաջադրանքին) հակասող նախագծերի համաձայնեցմանը.
- կառուցապատողների կողմից նախագծային շեղումներով իրականացվող շինարարական աշխատանքներին:

Բողոքներից 72-ը (23%) ստացվել է թեժ գծով:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

Խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (Տրանսպորտի անվտանգության բնագավառի վերաբերյալ պատրաստվել է 65 ռեպորտաժ, որից 21 հեռուստատեսությամբ՝ 21 հարցազրույց, 44-ը ռեպորտաժ՝ *ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի* կողմից, **Տրանսպորտային անվտանգության բնագավառ**ի վերաբերյալ ՏՄ պաշտոնական կայքում՝ 109 հոդված, ԶԼՄ-երում հրապարակվել է 318 հոդված):

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում՝ Տրանսպորտի անվտանգության բնագավառի վերաբերյալ կատարվել է 4 իրազեկող բնույթի հրապարակում: Հաղորդագրությամբ նշված իրազեկող բնույթի հրապարակումները ուղարկվել են մի շարք ԶԼՄ-երի, որի արդյունքում արխիվավորվել է ԶԼՄ-երի կողմից հրապարակված 13 իրազեկող նորություն:

Ուղարկվել են նաև 861 նախազգուշացնող բնույթի գրություններ և 1585 ծանուցումներ: 2019 թվականի ընթացքում ուղարկվել են իրազեկող բնույթի 149 գրություն և 354 ծանուցում:

Խորհրդատվություն է տրամադրվել 435 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 207 դեպքում (47.6 %)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, 228 դեպքում (52.4%)՝ տնտեսավարող սուբյեկտների կամ քաղաքացիների պահանջով: 2019 թվականի նույն ժամանակահատվածում խորհրդատվություն է տրամադրվել թվով 212 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 82 դեպքում (38,7%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է Էներգետիկայի և էներգասպառման ոլորտին վերաբերող 4 հաղորդագրություն: Տպագիր լրատվամիջոցներով հրապարակվել է 30 մամուլի հաղորդագրություն: Նկարահանվել է Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում 1 տեսահոլովակ:

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է Էներգետիկայի և էներգասպառման ոլորտին վերաբերող 13 հաղորդագրություն, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով՝ 10 մամուլի հաղորդագրություն:

Իրավախորհրդատվական աջակցություն է տրամադրվել 324 (2019 թվականին՝ 129) տնտեսավարողների և քաղաքացիների, ընդ որում 213 դեպքում (շուրջ 65,8%) տնտեսավարողների և քաղաքացիների պահանջով: Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից տրված հարցերը հիմնականում կապված են ՀՀ տարածքում 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում

նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու գործընթացի հետ, որն իրականացվում է համաձայն 2004թ. դեկտեմբերի 14-ի «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին կետի գ) ենթակետի:

Իրազեկելու նպատակով կազմակերպվել է 116 հանդիպում, որից 38-ը (32,7%)՝ Սյունիքի, 36-ը (31%)՝ Արարատի, 24-ը (20,1%)՝ Լոռու և 18-ը (16,2%)՝ Վայոց Ձորի մարզերում:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

ՔՏՀԱՏՄ աշխատակիցների կողմից՝ 2020 թվականի ընթացքում կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ըստ անհրաժեշտության ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև օրենսդրական պահանջներին վերաբերվող խորհրդատվություններ: Այդ թվում.

- ✓ հողային հաշվեկշիռը (բալանսը) ճիշտ կազմելու վերաբերյալ (ՀՀ կառավարության 23.10.2000թ. «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 31.05.2005թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների, մարզերի և Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռները կազմելու մասին հրահանգները հաստատելու մասին» թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգ),

- ✓ աճուռդային փաթեթների պարունակության վերաբերյալ (ՀՀ «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 12.04.2001 թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման 3-րդ կետի ա) և գ) ենթակետեր),

- ✓ հողերի նպատակային նշանակությունը փոխելու համար՝ միջգերատեսչական հանձնաժողով ուղարկվող փաթեթների պարունակության, նպատակային և գործառնական հողատեսքերի կարգավիճակը փոխելու վերաբերյալ՝ (ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշում):

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել է 10 (2019 թվականին՝ 15) հոդված, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել է 84 (2019 թվականին՝ 36) հաղորդագրություն:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

2020 թվականի ընթացքում տեխնիկական և հրդեհային անվտանգության հարցերով տրամադրվել է խորհրդատվություն 1567 տնտեսավարողների և քաղաքացիների: Կատարված աշխատանքի 68,3% դեպքերում խորհրդատվությունը տրվել է տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների պահանջով: Մինչդեռ 2019 թվականի 1175 խորհրդատվությունների 991-ը (84,34%) տրամադրվել է Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:





Թե՛ 2019, թե՛ 2020 թվականների ընթացքում հանրության կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են հրդեհային և տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջների խախտումներին, այդ թվում՝

- ✓ օբյեկտների միջև հակահրդեհային միջտարածություններին, հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի առկայության պահանջներին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 գլուխ 7),
- ✓ կրակմարիչների քանակի հաշվարկին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 բաժին VIII):

Խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (ՏՄ պաշտոնական կայքում՝ 17 հրապարակում, մամուլի մշտադիտարկում՝ 61 հրապարակում, հեռաստառադիոելույթ՝ 3 հարցազրույց): Հրդեհների նախականխման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև տնտեսավարողներին տրամադրվել է 670 գրություն:

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել է 30 հոդված, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել է 37 հոդված, հեռարձակվել է 8 հարցազրույց:

Քաղաքաշինության բնագավառում

2020 թվականի ընթացքում քաղաքաշինության հարցերով տրված 1753 խորհրդատվություններից 1232-ը (70,3%) տրամադրվել տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների պահանջով: Մինչդեռ 2019 թվականի 245 խորհրդատվությունների 72,2% (177)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:





Թե՛ 2019, թե՛ 2020 թվականների ընթացքում հանրության կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են.

- ✓ շենք-շինությունների, ինչպես նաև հարակից հողամասերում կառուցվող շենքերի միջև եղած հեռավորություններին՝ հարաչափերին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 76, 79, 80, 81 կետեր և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ բնակարանների լուսավորության և ինսոլացիոն հաշվարկներին. (Արհեստական և բնական լուսավորում ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմեր).
- ✓ պատուհաններից դեպի հարևանի տարածք տեսանելիության հետ կապված հարցեր («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 79, 80, 81 կետեր)
- ✓ կառուցապատողների և հարևան շենքերի սեփականատերերի միջև գրավոր համաձայնությունների հետ կապված հարաբերություններին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 81 կետ և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ շենք շինությունների նպատակային և գործառնական նշանակությյունների փոփոխության հարցերին.(ՀՀ կառավարության 02.02.2002թ.N88 որոշումամբ հաստատված կարգի 3.1 և 3.2 կետեր):

Խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (ՏՄ պաշտոնական կայքում՝ 9 հոդված, մամուլում՝ 43 հոդված, հեռաստառադիոելույթ՝ 3 հարցազրույց):

2019 թ.խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (հեռուստատեսությամբ՝ 5 հարցազրույց, մամուլում՝ 39 հրապարակում, ՏՄ պաշտոնական կայքում՝ 27 հրապարակում):

Տեսչական մարմնի գործունեությանը վերաբերող աշխատանքային այլ հանդիպում-քննարկումների, այցերի, ժողովների վերաբերյալ հաշվետու տարում ՏՄ պաշտոնական կայքէջում տեղադրվել է 17 հոդված:

Պաշտոնական պարզաբանում է տրվել ԶԼՄ-երում տեղ գտած թվով 4 հրապարակման:

Կազմակերպվել է ՏՄ մարմնի գործունեության հինգ ոլորտներին վերաբերող ընդհանուր թվով 70 հարզացրույց և ուղիղ եթեր, որից 5-ը վերաբերում է ՏՄ ընդհանուր գործունեությանը, մնացածը տրանսպորտի անվտանգության բնագավառում COVID-19 համավարակի ընթացքում վերահսկողական աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի և ՔՏՀԱՏՄ համագործակցությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նկարահանվել է 1 իրազեկող բնույթի տեսահոլովակ՝ ներտնային գազասպառման համակարգի անվտանգության ապահովման վերաբերյալ, որը Հ1 հ/ը, Շանթ հ/ը, Նոր Հայաստան հ/ը հետ ձեռքբերված պայմանավորվածության արդյունքում 2 ամիս օրը 2-3 անգամ ցուցադրվել է նշված հեռուստաընկերություններով:

ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի և ՔՏՀԱՏՄ Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի համագործակցությամբ պատրաստվել է 1 իրազեկող բնույթի տեսահոլովակ՝ հանրապետության անտառային և հարակից բուսածածք տարածքներում հրդեհների առաջացման, տարածման վտանգի կանխարգելման վերաբերյալ,որը ցուցադրել են Հ1 հ/ը, Շանթ հ/ը և 22 լրատվական կայքերի youtube-յան ալիքներում:

ՔՏՀԱ տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի նախաձեռնությամբ և ՏՄ ղեկավարի անմիջական մասնակցությամբ նշված ժամանակահատվածում կատարվել են իրազեկման աշխատանքներ՝ Արմավիրի մարզի Արգավանդ-Փարաքար գյուղերի տարածքում գործող (Արգավանդի կահույքի խանութներ) շուրջ 40-ից ավելի կահույքի վաճառքով և արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների հետ: Տրամադրվել են հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ պատրաստված իրազեկող գրքույկներ և խորհրդատվություն:

Covid-19 համավարակով պայմանավորված ՔՏՀԱՏՄ-ի տրանսպորտի անվտանագության վարչության կողմից հանրային տրանսպորտում ՀՀ պարետի կողմից տրված անվտանգության կանոններին հետևելու նպատակով՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի նախաձեռնությամբ Տեսչական մարմնի և ՃՈ համապատասխան պաշտոնյաների հետ համատեղ կազմակերպվել է 1 ասուլիս, ինչպես նաև Արտակարգ դրության պայմաններում Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի նախաձեռնությամբ և համակարգմամբ ամենօրյա գրաֆիկով լուսաբանվել է

հանրային տրանսպորտի նկատմամբ իրականացվող վերահսկողության, մշտադիտարկման ընթացքը։

Մասնավորապես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ պատրաստվել է 44 ռեպորտաժ՝ ստուգումների և վերահսկողության ընթացքի մասին։ Հանրային, Շանթ հեռուստաընկերությունների, ինչպես նաև FactorTV և aravot.am էլեկտրոնային տեղեկատվական հարթակների կողմից ապահովվել է 2 ուղիղ եթեր՝ տրանսպորտի դիտարկման վայրից, առանձին նաև վերահսկողության ընթացքի վրաբերյալ Հ1-ի կողմից պատրաստվել է 28 ռեպորտաժ, որոնցից 1-ը ցուցադրվել է նաև Շանթ հ/ը-ով։ Հ1-ի կողմից պատրաստվել է ընդհանուր բնույթի 1 ռեպորտաժ՝ ծանրաքարշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների վերաբերյալ։ Հանրային ռադիոն պատրաստել է 1 ռադիոելույթ՝ Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ՝ Տեսչական մարմնի ղեկավարի մասնակցությամբ։

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վարչական վարույթները հիմնականում հարուցվել են տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների շրջանակներում տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարագրերի, ղեկավարի տեղակալի կողմից տրված հանձնարարականների (տրանսպորտային անվտանգության ոլորտում), պետական մարմինների և քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

Իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է 307 արձանագրություն (2019 թվականին՝ 298), որից 109-ը (ընդհանուր քանակի 35,5%)՝Երևանում, 42-ը՝ Արմավիրի, 41-ը՝ Սյունիքում մարզերում և այլն՝ ըստ պատկերի:



Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Կայացվել է 318 որոշում, որից 257-ը՝ վարչական տույժ նշանակելու մասին, 61-ը որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կարճման մասին: Նկարում պատկերված է 2020 և 2019 թվականների համեմատական գրաֆիկը:



Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից հաստատված չվացուցակներով ավտոբուսների (միկրոավտոբուսների) մեկնման ժամերը չպահպանելուն, առանց ճանապարհային թերթիկի կամ ճանապարհային թերթիկում համապատասխան նշումների բացակայությամբ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացմանը և ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներն առանց երթուղին արտահայտող ցուցատախտակի և (կամ) երթուղու չվացուցակի և (կամ) երթուղու սխեմայի (բացառությամբ ներհամայնքային երթուղիների) և (կամ) սպասարկող կազմակերպության անվանման և գտնվելու վայրի նշումով ցուցանակի և (կամ) տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների պահանջներին անհամապատասխան արտաքին և ներքին կահավորմամբ շահագործելուն:

Տրանսպորտի անվտանգության բնագավառում կայացված 12 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 33-ը՝ դատական:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 18 արձանագրություն (2019 թվականին՝ 22), կայացվել է 20 որոշում (2019 թվականին՝ 16) վարչական տույժ նշանակելու մասին, 3 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում կայացված 2 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 1-ը՝ դատական:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 400 հատ արձանագրություն, որից 60-ը Երևանում, 53-ը Կոտայքի մարզում և այլն՝ ըստ պատկերի:



Կայացվել է 413 որոշում, որից 389-ը՝ վարչական տույժ նշանակելու մասին, 15-ը կարճման, 4-ն՝ արտադրական վտանգավոր օբյեկտի գործունեությունը դադարեցնելու մասին, 5-ը՝ փորձագետի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին: Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում կայացված 11 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 24-ը՝ դատական:

2019 թվականին կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 134 արձանագրություն: Տեխնիկական անվտանգության ոլորտում իրականացվել է 36 վարչական վարույթ, կայացվել է 21 որոշում՝ 6-ը կարճման, 15-ը վարչական տույժ նշանակելու մասին: Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 8 հայցադիմում տեխնիկական անվտանգության ոլորտին առնչվող հարցերով, որից 6 դեպքերում բողոքարկվել են տեխնիկական անվտանգության բնագավառներում կայացված որոշումները:

Քաղաքաշինության բնագավառում

Կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 226 արձանագրություն (2019 թվականին՝ 131): Կայացվել է 214 որոշում վարչական տույժ նշանակելու մասին, 1 կասեցման որոշում: Աղյուսակում ներկայացված է արձանագրությունների և վարչական տույժ նշանակելու մասին որոշումների քանակի բաշխվածությունն ըստ մարզերի .

	վերահսկողության արդյունքների ամփոփման արձանագրությունների քանակ	վարչական տույժ նշանակելու մասին որոշումների քանակ
Երևան	110	109
Շիրակ	11	11
Լոռի	28	27
Կոտայք	17	15
Տավուշ	10	10
Արարատ	10	10
Արմավիր	8	7
Սյունիք	2	2
Արագածոտն	14	14
Գեղարքունիք	16	9

Քաղաքաշինության բնագավառում կայացված 7 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 7-ը դատական կարգով:

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

2020 թվականի Տեսչական մարմնի դեմ բերվել է 32 բողոք վերադասության կարգով: Ըստ վերահսկման առանձին ոլորտների՝ պատկերը հետևյալն է.



<u>Տրանսպորտի անվտանգության բնագավառում</u> կայացված 12 վարչական ակտ է բողոքարկվել վերադասության կարգով, 12 դեպքում էլ կայացված վարչական ակտերը թողնվել են անփոփոխ: 2019 թվականին բերվել էր 9 վերադաս բողոք, որից 4-ի դեպքում բողոքները մերժվել է, 3-ի դեպքում վարչական գործի վարույթը կարճվել է, 1-ով կնքվել է հաշտության համաձայնություն, 1-ով վարչական գործի վարույթը կասեցվել է:

Բողոքները վերաբերվել են Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից փոխադրումներին ներկայացվող պահանջները չկատարելու պահանջին:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u> բողոքարկվել է 2 վարչական ակտ, որը քննության արդյունքում վարչական ակտերը մի մասով կարճվել, իսկ մի մասով՝ թողնվել են անփոփոխ: 2019 թվականին Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում բողոքներ չէին ներկայացվել:

<u>Տեխնիկական անվտանգության բնագավառում</u> կայացված 11 վարչական ակտ է բողոքարկվել, որոնցից 9-ը թողնվել է անփոփոխ, 1-ը՝ կարճվել է, քանի որ բողոքարկվել է միաժամանակ և՛ դատական, և՛ վերադասության կարգով, 1-ը կարճվել է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի ուժով, համաձայն որի՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: 2019 թվականին ներկայացվել էր 8 վերադաս բողոք, որոնցից 7-ը մերժվել էր և կայացված վարչական ակտերը թողնվել էին ուժի մեջ, 1-ի վերաբերյալ կնքվել էր հաշտության համաձայնություն:

Բողոքները վերաբերվել են արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման ռեեստրում գրանցելու պահանջի, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման, արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը դադարեցնելու պահանջներին:

Քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 7 վարչական ակտ, բոլորը կարճվել են: 2019 թվականին բողոքներ չէին ներկայացվել:

7.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 73 հայցադիմում, նախորդ տարվա հետ միաժամանակ ընդհանուր թիվը կազմում է 97 հայցադիմում, որոնք մեծամասամբ վերաբերում են Տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերի (որոշում, կարգադրագիր, ցուցում) վիճարկմանը:

Տրանսպորտի անվտանգության բնագավառում 33 հայցադիմում է ներկայացվել: 19 դատական գործով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, 5-ով Տեսչական մարմնի կողմ, 5-ով վերաքննիչ բողոք է ներկայացվել: Ընթացիկ փուլում գտնվում է 21 դատական գործ.

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում 1 հայցադիմում, որից Տեսչական մարմնի դեմ 1 վճիռ է կայացվել, բողքարկվել է վերաքննիչ դատարան, գտնվում է ընթացիկ փուլում:

Տեխնիկական անվտանգության բնագավառում 24 հայցադիմում է ներկայացվել, որոնցից 4-ով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, Տեսչական մարմնի կողմ՝ 5 վճիռ, վերաքննիչ դատարան բողոքարկվել 1 դատական ակտ: Ընթացիկ փուլում գտնվում է 25 դատական գործ:

Քաղաքաշինության բնագավառում ընդհանուր թվով 10 հայցադիմում է ներկայացվել, որոնցից Տեսչական մարմնի դեմ վճիռ չի կայացվել, 1-ի՝ վարույթ ընդունելը մերժվել է, Ընթացիկ փուլում գտնվում է 9 դատական գործ:

Գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառում 8 հայցադիմում է ներկայացվել, որոնցից Տեսչական մարմնի դեմ կայացված վճիռներ չկան, Տեսչական մարմնի կողմ՝ 3 վճիռ, վերաքննիչ դատարան բողոքարկվել է 3 դատական ակտ (որոնք կայացվել են Տեսչական մարմնի օգտին): Ընթացիկ փուլում գտնվում է 6 դատական գործ:



8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գեոդեզիա և հողօգտագործում

Համապատասխան առաջարկություն ներկայացվել է ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ:

Առաջարկի բովանդակությունը՝ Ղեկավարվելով «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված պահանաջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 22 օգոստոսի 2019 թվականի N 1071 որոշման, ինչպես նաև ՀՀ վարչապետի հունիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և ոլորտների հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողական գործառույթները՝ ստուգման միջոցով իրականացնելու անհրաժեշտությունը, համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպան և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, Տեսչական մարմնի կողմից առաջարվել են վերը նշված ոլորտներում ստուգումների ստուգաթերթերի նախագծեր: Ստուգաթերթերը կազմվել են գեոդեզիայի և քարտեզագրման ոլորտների և գործունեության օրենսդրական պահանջների պահպանմամբ՝ հիմնվելով ստուգում իրականացնող Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտի և աշխատանքի առանձնահատկությունների վրա:

Քաղաքաշինություն և էներգետիկա

Հաշվետու ժամանակահատվածում առաջարկվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ:

Առաջարկվել է.

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 157[10]-րդ հոդվածում «հիսնապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 105-րդ հոդվածում «քսանապատիկի» բառը փոխարինել «երեսնապատիկից մինչև հիսնապատիկի» բառերով, իսկ «հիսնապատիկի» բառը՝ «հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի» բառերով:

Առաջարկի բովանդակությունը՝ Ներկայացված առաջարկը պայմանավորված է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական տույժերի՝ տուգանքների չափերի բարձրացման անհրաժեշտությամբ, քաղաքաշինության և էներգետիկայի ոլորտում տիրող իրավախախատումների վերլուծությամբ և իրավիճակով: Վարչական պատասխանատվություն նախատեսող ցածր տուգանքների պայմաններում հաճախ, ինչպես քաղաքացիների, այնպես էլ պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառված տույժերը հետագայում նման խախտումներ տույլ չտալու ազդակ չեն հանդիսանում, դրանք

չենք կրում կանխարգելիչ բնույթ։ Արդյունքում, Տեսչական մարմինը ստիպված է լինում դիմել դատարան՝ դատական կարգով կարգադրագրերը և ցուցումները կատարելուն պարտավորեցնելու պահանջով։

Կարգադրագրերը և ցուցումները չկատարելու համար համեմատաբար մեծ չափի տուգանքներ նախատեսելու դեպքում վարչական տույժի ենթարկվածը կգերադասի սահմանված ժամկետներում կատարել կարգադրագրի (ցուցումի) պահանջները և խուսափել ավելի բարձր տուգանքից։

Ակնկալվող արդյունքը՝ Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների արդյունքների վերլուծությամբ արձանագրվել է, որ գործող պատժաչափերի կիրառմամբ պայմանավորված իրավախախտումների ծավալների նվազեցում չի նկատվում։ Ակնկալվում է, որ պատասխանատվության չափերի ավելացումը կնպաստի նաև իրավախախտումների քանակական նվազեցմանը։

<u>Տրանսպորտային անվտանգություն</u>

Առաջարկվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ.

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել 137^8-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

137^8. Տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների իրականացմանը խոչընդոտելը կամ թույլ չտալը, ինչպես նաև այդ մարմնի պաշտոնատար անձանց կողմից տրված կարգադրագրերի պահանջները սահմանված ժամկետում չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով։։

Առաջարկի բովանդակությունը

Տրանսպորտի ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքի համաձայն Տեսչական մարմնի կողմից տնտեսավարողներին տրվում են կարգադրագրեր՝ բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ՝ սահմանելով ժամկետներ դրանց վերացման համար: Սակայն գործող օրենսդրությամբ չկա համապատասխան կարգավորում, որը կնախատեսեր Տեսչական մարմնի կողմից տրանսպորտի ոլորտում տրված կարգադրագրերի պահանջները չկատարելու համար պատասխանատվություն, ինչպես օրինակ՝ քաղաքաշինության, էներգետիկայի, տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտներում է: Արդյունքում, Տեսչական մարմնի կողմից տվյալ ոլորտում տրված կարգադրագրերը չկատարվելու դեպքում դրանք մնում են անկատար՝ համապատասխան գործիքակազմի բացակայության պատճառով։

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1106-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություն է ներկայացվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և ՀՀ Ոստիկանություն:

Առաջարկը վերաբերվել է ծանրաքարշ կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների չափորոշիչների սահմանման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելուն:

Առաջարկի բովանդակությունը՝ 1. ՀՀ ԿՈ 20.06.2006թ. թիվ 1106-ն որոշման I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ Գլխի 2-րդ կետի 13-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «հատուկ թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով՝ 44 տոննա ընդհանուր զանգվածը կամ մեկ առնու վրա ընկնող բեռնվածքը 11.5 տոննան գերազանցող ծանրաքաշ տրանսպորտային միջոցով չմասնատվող բեռ փոխադրելու իրավունք վերապահող փաստաթուղթ»:

2. Որոշման IV. ԾԱՆՐԱՔԱՇ ԵՎ (ԿԱՄ) ՄԵԾ ԵԶՐԱՉԱՓԵՐՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ Գլխի 26-րդ կետից հետո ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ՝ «թույլատրելի առավելագույն զանգվածը և (կամ) մեկ առնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ տրանսպորտային միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացման նպատակով, տրանսպորտի ոլորտում վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինը իրավասու է իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման և չմասնատվող բեռ փոխադրելու համար թույլտվություններ տվող լիազոր մարմնի էլեկտրոնային շտեմարանից առցանց ստանալու համապատասխան տեղեկատվություն»:

Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գործառույթների կատարելու համար համապատասխան օրենսդրական հիմքերի ստեղծումն է:

<u>Համաչափ վարչարարություն</u>

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնում իրականացված վարչական գործերի քննության, վարչական վարույթների որակային բարելավման նպատակով ՀՀ Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ առաջարկություն է ներկայացվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 225-րդ հոդվածի

1. 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Հրդեհային անվտանգության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և որոշումներ կայացնելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը և/կամ ղեկավարի տեղակալը».

2. ա), բ) և գ) կետերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 232.[1]-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 104, 105 և 106[1] -րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և որոշումներ կայացնելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը և/կամ ղեկավարի տեղակալը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 244.[11]-րդ հոդվածի

1. 2-րդ պարբերության մեջ «վարչական տույժեր նշանակելու» բառերը փոխարինել «որոշումներ կայացնելու» բառերով:

2. 1-ին և 2-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի և ավելի չափով.

2) քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի չափով, և նախազգուշացում:»:

3. 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 244.[13]-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ «վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «որոշումներ կայացնելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը և/կամ ղեկավարի տեղակալը» բառերով:

Առաջարկի բովանդակությունը՝ Գործող իրավակարգավորումների համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և որոշումներ կայացնելու իրավունք ունեն Տեսչական մարմնի ղեկավարը և տարածքային ստորաբաժանումների պետերը: Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումները չունեն իրավաբանի հաստիք, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունն իրականացնում են մասնագիտացված ոլորտների մասնագետները: Վարչական

իրավախախտումների վերաբերյալ գործերը հնարավորինս վերահսկելի դարձնելու, համակարգված ինչպես նաև ոչ ռիսկային վարչական ակտերի ընդունումը բացառելու նկատառումից ելնելով՝ առաջարկվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության արդյունքում որոշումներ կայացնելու իրավասությունը վերապահել Տեսչական մարմնի ղեկավարին և ղեկավարի տեղակալներին։ Նման կարգավորումը կապահովի նաև միատեսակ և համաչափ վարչարարության իրականացումը։

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի Տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչարարության համաչափությունը, միասնականությունը, վերահսկելիությունը։

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին բացահայտվել են հետևյալ ռիսկերը.

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

1. Ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների իրականացումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1587-Ն որոշման պահանջներով: Անհրաժեշտ է ապահովել բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով ընտրված տրանսպորտային միջոցների շահագործումը, ուղևորների անվտանգությունը և սպասարկման պատշաճ մակարդակը:

2. Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խնդիրները պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ:

3. ՀՀ տարածքում «Հայավտոկայարան» ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառի խնդիրները վերաբերում են երթուղիների սպասարկման չվացուցակներով հաստատված փոխադրումների կազմակերպման ժամային գրաֆիկի պահպանման, ավտոկայարանային ծառայությունների մատուցման, ուղեբեռի ժամանակավոր պահպանման, ուղևորների նստեցման և երթևեկության անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացներին:

4. Ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովելու համար Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր բնակավայրերում անհրաժեշտ է լրացուցիչ և ավելի խիստ վերահսկողական մեխանիզմների կիրառում, քանի որ 2020թ. նույն իրավիճակում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում Երևան քաղաքում կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ընդհանուր թվով 109 արձանագրություն: Տիրող իրավիճակում ոչ մի լուրջ բարելավում չի արձանագրվել (մասնավորապես Երևան քաղաքում) և անրաժեշտ է ամենօրյա հետևողական աշխատանք, կոշտ վարչարարություն:

5. Քաղաքացիներից և տնտեսավարող սուբյեկտներից ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են միջմարզային կանոնավոր երթուղիների սպասարկման չվացուցակների անհստակությանը, զուգահեռ շահագործվող երթուղիների չվացուցակների կրկնություններին, փոխադրողների կողմից չվացուցակների պահանջների պարբերաբար խախտումներին, ինչպես նաև կանոնավոր որոշ երթուղիների ուղեգծերով բազմաթիվ ոչ կանոնավոր և ապօրինի տաքսամոտորային տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների իրականացմանը:

6. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր՝ կապված տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության հետ: Տվյալ բնագավառի խնդիրների կարգավորման ուղղությամբ 2020 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացվել են վերահսկողական միջոցառումներ Կոտայքի, Արարատի, Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում, կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 73 արձանագրություն, ինչը վկայում է խնդրի լրջության մասին: Գործառույթը կրում է շարունակական բնույթ:

7. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 2-րդ կետի պահանջով միջպետական երթուղիների ուղևորների տոմսավորումն իրականացվում է բացառապես ավտոկայարանների և ավտոկայանների, ինչպես նաև դրանց հետ պայմանագիր ունեցող այլ կազմակերպության տոմսարկղերից: Օրենսդրության սույն պահանջի անտեսումը առաջացնում է միջպետական տվյալ երթուղով մեկնող ուղևորների պատշաճ սպասարկման և անվտանգության ապահովման ռիսկ, ինչպես նաև խախտվում են հավասար մրցակցության պայմանները:

8. *Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության ոլորտում ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման հետ:

*Տվյալ գործառույթը հնարավոր է կատարել միայն համապատասխան օրենսդրական փոփոխություններից հետո և համապատասխան մասնագետներով համալրվելու պարագայում.

9. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերը ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ.

10. ՀՀ միջպետական, հանրապետական և մարզային ենթակայության տեղական նշանակության պետական ավտոճանապարհներին (ներառյալ պաշտպանական գոտիներում) գովազդի (գովազդային վահանակների) տեղադրման օրինականության «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ մշտադիտարկման և վերահսկողության իրականացում, որի ընթացքում հայտնաբերվել են շուրջ 238 ապօրինի տեղադրված գովազդային վահանակներ, որոնցից 73 գովազդակրի տրվել է նախազգուշացում գովազդային վահանակների օրինականացման համար:

11. Համապատասխան մեթոդաբանության հիման վրա կատարված ռիսկայնության հաշվարկի և ստուգաթերթի բացակայությունը խոչընդոտում է ԵԱՏՄ մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների նկատմամբ հսկողության իրականացմանը:

12. Տրանսպորտային անվտանգության ապահովմանը խոչընդոտող հիմնական պատճառներն են գործող օրենսդրության մեջ առկա բացթողումները և Տեսչական մարմնին վերապահված իրավասությունների շրջանակի որոշակի սահմանափակումները, ինչպես նաև նյութատեխնիկական ռեսուրսների (տրանսպորտային և տեխնիկական այլ միջոցներով հագեցվածություն, ծանրաքարշ բեռնատարներով փոխադրվող բեռնվածքի քաշի կշռման համար անհրաժեշտ համապատասխան կշեռքների ապահովում և այդ նպատակով ավտոճանապարհներին առանձնացված հատուկ գրպանիկների առկայություն, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման անցկացման և վտանգավոր բեռների փոխադրումների վերաբերյալ Լիազոր մարմնի և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկատվության էլեկտրոնային բազաներին առցանց միացում և այլն) պակասին, աշխատանքների ծավալի անհամապատասխանությունն անձնակազմի թվաքանակին:

<u>Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ</u>

1. Վերջին տարիներին ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած մահացու ելքով պատահարների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների կողմից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ դրանց զգալի մասը տեղի են ունեցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ-ի կողմից օգտագործվող մի շարք 6, 10/0.4 կՎ լարման ենթակայաններում և 0.4կՎ, 6կՎ, 10կՎ լարման օդային գծերում, որտեղ առկա են էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների, էլեկտրահաղորդաբաշխման, շահագործման անվտանգության և էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով ներկայացված պահանջների կոպիտ խախտումներ: Դրանք փաստացի չեն գտնվում «ՀԷՑ» ՓԲ ընկերության հաշվեկշռում, սահմանված կարգով չեն իրականացվում տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքներ, ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց անմխիթար վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում է ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Նշված էլեկտրատեղակայանքները նախկինում պատկանել են այգեգործական ընկերություններին կամ այլ կազմակերպություններին, իսկ այժմ դրանք համարվում են տիրազուրկ:

Առկա են նաև փաստացի տնտեսվարող սուբյեկտներին պատկանող ենթակայաններ, որոնց էլեկտրատեղակայանքները առանց համատեղ շահագործման և անվտանգության կանոնների պահպանման պարտավորությունների վերաբերյալ կնքված պայմանագրերի միաժամանակ օգտագործվում են նաև «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրամատակարարումն ապահովելու համար:

Ստեղծված իրավիճակը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին:

2. ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած համակարգային բնույթի պատահարների արագ վերականգնմանը երբեմն խոչընդոտում է էներգահամակարգում

ռեակտիվ էներգիայի պակասորդի առկայությունը, որի համար պատճառ են հանդիսանում ՀԷԿ-երում հիդրոգեներատորների սինքրոն կոմպենսատորի ռեժիմում աշխատելու և հզորության գործակցի սահմանված չափի ապահովման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերում դրանց ապահովման պահանջների բացակայությունը:

3. Էլեկտրատեղակայանքների հետ առնչվող վարչատեխնիկական, շահագործող, նորոգող, կարգաբերող, փորձարկող, շինմոնտաժային, օպերատիվ և այլ անձնակազմերի համար տեխնիկական կանոնակարգերում սահմանված են պահանջներ՝ կապված էլեկտրատեղակայանքներում աշխատանքի պայմանների ռիսկերի գնահատման, առողջության, էլեկտրաանվտանգության ապահովման համար անհրաժեշտ և համապատասխան որակավորման խումբ ունենալու հետ, սակայն տվյալ կանոնակարգերում ամբողջովին արտացոլված չեն անձնակազմերի ուսուցման ծրագրերին, էլեկտրաանվտանգության որակավորման խմբերի շնորհման անհրաժեշտ ծավալին և բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները, դրանց շնորհման պայմաններն ու կարգը:

Տվյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական դաշտի բացակայությունը, անձնակազմերի ուսուցման և վերապատրաստման ուսումնական կենտրոնների, ինչպես նաև սահմանված կարգով և ժամկետներում գիտելիքների ստուգման և որակավորման խմբերի շնորհման համար իրավասու մշտական գործող հանձնաժողովների բացակայությունը խնդիրներ են առաջացնում տնտեսավարող սուբյեկտների շրջանում, որոնք չեն կարողանում կազմակերպել համապատասխան մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացները: Որակավորում ունեցող մասնագետների բացակայությունը հանգեցնում է էլեկտրատեղակայանքների անվտանգ շահագործման ռիսկերի աճին՝ պատճառ հանդիսանալով մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ պատահարների առաջացմանը:

4. Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ գազամատակարարման բնագավառում մահացու ելքով պատահարների զգալի մասը տեղի են ունենում գազի ներտնային գազասպառման համակարգի ոչ պատշաճ սպասարկման արդյունքում:

5. Ստուգումների 2021 թվականի տարեկան ծրագիրը կազմվում է ելնելով տնտեսավարող սուբյեկտների և դրանց օբյեկտների ռիսկայնության գնահատումից, ինչն առաջին հերթին ենթադրում է Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և դրանց օբյեկտների տեղեկատվական բազայի ձևավորման աշխատանքների կատարում՝ ըստ համապատասխան չափորոշիչների:

6. Օրենքով և ՔՏՀԱՏՄ կանոնադրությամբ վերապահված գործառույթներն իրականացնելու համար ՔՏՀԱՏՄ Էներգետիկայի և էներգասպառման վարչությունում ու տարածքային բաժիններում անհրաժեշտ մասնագիտական հաստիքների ոչ բավարար քանակը հնարավորություն չի ընձեռնում պատշաճ կարգով և որակով իրականացնել նշված գործառույթները, լիարժեք վերահսկողություն իրականացնել, ամբողջությամբ գնահատել և նվազեցնել հնարավոր ռիսկերը: Մասնավորապես, հնարավոր չէ էներգատեղակայանքներում և դրանց օբյեկտներում առկա ռիսկերը բացահայտելու նպատակով անհրաժեշտ քանակությամբ ստուգումների իրականացումը, տարեկան շուրջ 1200 էներգատեղակայանքների գործարկման

եզրակացություն տրամադրելու նպատակով տեխնիկական ստուգումների պատշաճ կարգով իրականացումը, էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննություններն իրականացնելու համար ստեղծվող հանձնաժողովների կազմերը սահմանված նվազագույն թվով մասնագետներով համալրումը, էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում տեղի ունեցած պատահարների պատշաճ վերլուծությունը, ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների ու վերապահված այլ գործառույթների և համակարգման այլ գործընթացների պատշաճ իրականացումը:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

1. 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև դիմումների, գրությունների հիման վրա և ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, աճուրդների և վարձակալության խախտումները շարունակում են մնալ հիմնական ռիսկային ուղղությունները: Բնագավառի առաջնային խնդիրներից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը: Առաջնային խնդիրներից է նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործության դրսևորումը:

2. 2020 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքներից շատերը վերաբերում են հերթապահ կադաստրային քարտեզների վարման աշխատանքների խախտումներին: Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1071-Ա որոշման՝ քարտեզագրական աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է ճանաչվել Տեսչական մարմինը: Միևնույն ժամանակ կատարվել են փոփոխություններ «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում, համաձայն որի գեոդեզիական և քարտեզագրական գործունեության պետական տեսչական վերահսկողությունը կիրականացնի ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը: 2021 թվականին կներկայացվեն առաջարկներ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կանոնադրության մեջ համապատասխան շտկումներ կատարելու վերաբերյալ, ինչը հնարավորությունն կտա Տեսչական մարմնին իրականացնել վերահսկողություն նաև

- գեոդեզիական և քարտեզագրական գործունեության բոլոր սուբյեկտների կողմից գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանման նկատմամբ.
- Հայաստանի Հանրապետության տարածքի գեոդեզիական կետերի և վարչատարածքային միավորների սահմանանիշերի հաշվառման, պարբերաբար հետազոտման և դրանց պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.

- գեոդեզիական աշխատանքների չափաբանական ապահովման, սերտիֆիկացման և ստանդարտների պահպանման նկատմամբ.
- Հայաստանի Հանրապետության պետական սահմանի և վարչատարածքային միավորների սահմանագծման և սահմանազատման աշխատանքների նկատմամբ.
- քարտեզների և հատակագծերի վրա աշխարհագրական անվանումների ճիշտ արտահայտման նկատմամբ.
- պետական և տեղական նշանակության (գերատեսչական) քարտեզագրագեոդեզիական ֆոնդերի պահպանման, նյութերի և տվյալների բազմացման ու օգտագործման, տեղեկատվության տրամադրման նկատմամբ։

3. Համապատասխան մեթոդաբանության և ստուգաթերթերի բացակայության պատճառով Տեսչական մարմինը չի կարողանում իրականացնել ստուգումներ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում:

4. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոց տուգանքների չափերը համաչափ չեն թույլ տրված խախտումներին, ուստի անհրաժեշտ է սահմանել տուգանքների ավելի մեծ չափեր՝ ոլորտում տեղի ունեցող խախտումների դեմ առավել արդյունավետ պայքարելու և հետագա հնարավոր խախտումները կանխելու համար։

5. Վերահսկողական գործառույթների իրականացումը ամբողջ ծավալով հնարավոր է ապահովել անձնակազմի թվաքանակի ավելացման և արդեն իսկ տեսչական մարմնի կողմից ձեռք բերված անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության օգտագործման առկայության դեպքում:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում</u>

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշմամբ հաստատված ոլորտային ռիսկերի աստիճանները և արձանագրվող հրդեհների վիճակագրությունը՝ 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս՝ շեշտը դրվել էր ներքոհիշյալ բարձր ռիսկային ոլորտներում առկա խնդիրները բացահայտելու և անվտանգությունն ապահովելու վրա։ Դրանք են՝

- ✓ արտադրական նշանակության օբյեկտներ,
- ✓ բենզալցակայաններ և գազալցավորման կայաններ,
- ✓ առևտրի և հասարակական սննդի օբյեկտներ,
- ✓ պայթուցիկ նյութերի, նավթամթերքների, հեղուկ և բնական գազերի պահեստներ,
- ✓ հրդեհապայթունավտանգ օբյեկտներ,
- ✓ հեղուկ վառելիքի, գազի, փայտանյութի և այլ այրվող նյութերի կուտակման վայրեր։

Սակայն 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրությամբ և ապա ռազմական դրությամբ պայմանավորված՝

Տեսչական մարմինը 2020 թվականի ընթացքում իրականացրել է տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների շուրջ 50 տոկոսը։

2. 2020 թվականի ծրագրով նախատեսված և ըստ անհրաժեշտության կատարված ստուգումները բացահայտեցին գործող ստուգաթերթերի լրամշակման անհրաժեշտությունը։ Միաժամանակ, Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել նոր ստուգաթերթեր և համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ։

3.2020 թվականի ընթացքում նախատեսված էր կազմակերպել հրդեհատեխնիկական հետազոտություններ նախադպրոցական հաստատություններում։ Սակայն, ՀՀ-ում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հետազոտությունները հիմնականում չեն կատարվել։ Տեսչական մարմինը նախատեսում է 2021 թվականին իրականացնել բաց թողնվածը։

4. 2020 թվականի ընթացքում ամռան ամիսներին մանկական հանգստյան ճամբարները չեն գործել՝ կապված նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) տարածման հետ։ Նախատեսվում է 2021 թվականին իրականացնել նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ ՀՀ տարածքում գործող բոլոր մանկական հանգստյան ճամբարներում՝ հանգստացող երեխաների անվտանգությունն ապահովելու, ծանր հետևանքով հրդեհներից խուսափելու նպատակով։

5.Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 2020 թվականի ընթացքում Երևան քաղաքի 189 բենզալցավորման կայաններում իրականցվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ։ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարին ներկայացվել է տեղեկանք հետազոտությունների արդյունքում հայտնաբերված հախտումների վերաբերյալ, ակնկալելով ստանալ համակարգային լուծումներ այդ խախտումները վերացնելու ուղղությամբ։

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

1. Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումները և վերահսկողական միջոցառումները ցույց են տվել, որ քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտները շինարարական աշխատանքները կատարում են համաձայնեցված նախագծից և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների շեղումներով։

2. Դիմում-բողոքների, ինչպես նաև պետական մարմինների կողմից ներկայացված գրությունների հիման վրա կատարված դիտարկումների շնորհիվ՝ համայնքների կողմից տրամադրվող քաղաքաշինական փաստաթղթերում բացահայտվեցին բազմաթիվ տարաբնույթ թերություններ և բացթողումներ։ Մասնավորապես համայնքների ղեկավարների կողմից տրամադրվում և համաձայնեցվում են սահմանված կարգի խախտումով նախագծման և շինարարության թույլտվություններ ու համաձայնեցվում են նախագծման թույլտվությանը

անհամապատասխան աշխատանքային նախագծեր։ Ակնհայտ է ՀՀ համայնքներում, ՀՀ մարզպետարաններում և Երևանի վարչական շրջաններում քաղաքաշինական գործունեության նկատմամբ տարեկան տեխնիկական ստուգումների անհրաժեշտությունը, որոնք հնարավոր կլինի իրականացնել ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 624 որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացում կատարելուց հետո։

3. ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում առկա միջտարածությունների հետ կապված նորմատիվ պահանջները՝ գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրում (արդեն իսկ բնակելի տներով կառուցապատված միջավայր), կառուցապատողների համար ստեղծում են կառուցապատման հետ կապված խնդիրներ։

4. Կառուցվող բազմաբնակարան շենքերի ստորգետնյա հարկերում բնակիչների համար նախատեսված ավտոկայանատեղիների ոչ բավարար լինելու պատճառով կից տարածքներում ավտոմեքենաների կայանման պատճառով ներհամայնքային ճանապարհները դառնում են դժվար անցանելի և առաջանում են խցանումներ։

5. Ստուգումները դեպի առավել ռիսկային ոլորտներ նպատակաուղղելու համար անհրաժեշտ է ներդնել *իրավական կարգավորող մեխանիզմ*, որը կապահովվի համայնքների ղեկավարների կողմից ժամանակին և պատշաճ կերպով լրացված քաղաքաշինական փաստաթղթերի ներկայացումը Տեսչական մարմին։

6. Համայնքներում գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական կառավարման հիմնարկների հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության ապահովումը։

7. Մասնագետների արհեստավարժության խնդիր՝ հատկապես ստուգում իրականացնելու հարցում։